ՀՅԴ Պաշտօնաթերթ






# ԴՐՕՇԱԿ







Դեկտեմբեր N12 (1627)

2010

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ







**«Դրօշակ»**
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

ՀՅԴ 120

«Դրօշակ»-ի հարցերին պատասխանում է ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանը 2

Հայ դատ

ՀՅԴ քաղաքական հիմնադրույթի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի միջազգային-իրավական լեգիտիմությունը 12

Խորհրդաժողով

Դեմոկրատացման գործընթացի խոչընդոտներն ու սահմանափակումները Հայաստանի Հանրապետությունում 19

Սոցիալ-տնտեսական

Արդիականացում տնտեսական ոլորտում նշանակում է ազգային տնտեսության կառուցում 25

Տեսական

Դեդուկտիվիզմը ՀՅԴ գաղափարախոսության մեջ 34

Նոր գրքեր

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար 41

Մատենագիտություն

«Դրօշակ»-2010 43

Պատկերասրահ

Էդիկ Վարդանյան 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY



Digitized by ARF PR Office



# ԿԱՄՔ, ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԹՈՒՆ ՄԻՏՔ

«Դրօշակ»-ի հարցերին պատասխանում է

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանը

*«Դրօշակ».- ՀՅԴ 120-ամյակի կապակցությամբ Ձեր ելույթները Տորոնտոյում, Մոնրեալում, Բեյրութում եւ Ստեփանակերտում շահեկանորեն ոչ միայն տարբերվում, այլեւ փոխլրացնում են մեկը մյուսին՝ բացահայտելով աշխատանքի այն ընդարձակ դաշտի սահմանները, որի մեջ այսօր գտնվում է Դաշնակցությունը: Որքան էլ տարբեր, փոխլրացնող, այսուհանդերձ, այդ ելույթներն ունեն խորքն ամբողջացնող մեկ հիմնական մոտեցում՝ կարեւորել եւ գնահատել Դաշնակցության ամենամեծ ձեռքբերումը, Ձեր բառերով ասած՝* **ազգի մեկության ապահովումը** *եւ* **հայկական պետականության վերականգնումը**:

**Հրանտ Մարգարյան.**- Այո, ամենամեծ ձեռքբերումը դա է: ՀՅ Դաշնակցության ծնունդով սկիզբ առավ մեր ժողովրդի երկու մեծ հատվածների ընտրյալների ժողովումը մեկ միացյալ կազմակերպության մեջ, մեկ ընդհանուր նպատակի համար ծավալվեց մեկ ընդհանուր պայքար: Ու շարունակվեց պայքարը, եւ շարունակվելով էլեկտրականացավ հայկական իրականությունը: Ի տես ծավալված միասնական պայքարի՝ անհետացան նույն ազգը բաժանող 9-դարյա արգելքները, խոչընդոտող սահմանները: Մի քանի տասնամյակ երկարող պայքարից հետո, հրի ու սրի, մոխիրների միջից ծնունդ առավ Հայկական պետականությունը՝ իբրեւ հիմնական գրավական ազգի մեկության ու հավերժացման: Մոխիրների միջից հառնեց մեր պետությունը եւ սկիզբ առավ հայ ժողովրդի վերելքը, հզորացումը: Քաղաքական գործոն դարձանք ու ապահովեցինք մեր ազգի գոյությունն ու զարգացումը:

Բաժան-բաժան ժողովրդից վերածվեցինք ազգի, կործանվող, սպառվող ժողովրդից դարձանք պետականություն, քաղաքական ինքնուրույն գործոն: Մենք փրկվեցինք ազգի մեկության պահպանմամբ ու անկախ պետականության վերականգնումով:

Ազգային անկախ պետականությունն այսօր մեր հիմնական գրավականն է՝ ազգի անվտանգ գոյության ու համընդհանուր զարգացման. արդեն իսկ Արցախով մասամբ իրականացած, բայց վստահ՝ վաղը նորանոր հաղթանակներով Միացյալ Հայաստանի իրականացմամբ:

Մենք ունեցանք վերջին 9-10 դարերի ամենամեծ հաղթանակը, նվաճումը, մենք ձեռք բերեցինք զարգանալու, վերականգնվելու, նորանոր հաղթանակներ ունենալու հիմնական հնարավորությունը: Մենք ձեւավորեցինք հայ ժողովրդի առանցքը, մենք փրկըվեցինք:

Եվ այսօր մենք պետք է մեր անկախ պետականության փաստը, ինչպես կասեր մեծ գրող Հրանտ Մաթեւոսյանը, ընդունենք իբրեւ սրբություն, դավանանք:

Մեր անկախ պետականության կարեւորության փաստը մենք ոչ մի բանի հետ համեմատելու իրավունք չունենք, նույնիսկ մեզ հետ, մեր 120-ամյա մաքառումի, նահատակ ընկերների տառապանքի հետ, որովհետեւ ինչ որ արեցինք ու անում ենք, այս մի կտոր հողի համար արեցինք: Անկախ այն բանից, թէ այդ փոքրիկ երկիրը մեր հայրենիքի որ մասն է ներկայացնում: Ազգային անկախ պետականությունը մերն է եւ առաջինը մենք իրավունք չունենք նույնիսկ ակամա խորթացնել այն մեր ժողովրդից, եւ ապա թույլ չպետք է տանք, որ ուրիշները զրկեն այդ պետությունն իր ազգային բովանդակությունից:

Ազգի մեկությունը եւ ազգային անկախ պետականությունը, ասացի, սրբություն են ու դավանանք: Ասացի գիտակցելով, որ ծայրահեղացնում եմ խոսքս, բայց անհրաժեշտ է այն ընկալենք հենց իբրեւ սրբություն ու դավանանք, որպեսզի թշնամու պարտադրանքով բաժան-բաժան, աշխարհացրիվ դարձած մեր ազգը չդառնա իրականում պառակտված ժողովուրդ, որպեսզի մեր պետականությունը մնա մերը, մեզ հարազատ, եւ մենք տիրոջ եւ միաժամանակ ծառայի հոգեբանությամբ նվիրվենք նրան, անենք մեր կարելին ու անկարելին, որպեսզի երկիրը զարգացող, անվտանգ երկիր դառնա՝ իբրեւ հիմնական կռվան Հայ դատի լուծման:

Անցած 20 տարում, նորօրյա Անկախ Հայաստանում, մենք նպատակ չդրեցինք իշխանություն դառնալ եւ չձեւավորեցինք ընտրություններ հաջողեցնող կազմակերպություն կամ ընտրական մեքենա, այլ առաջացրինք իրական կազմակերպություն, ստեղծեցինք գաղափարական շարժում, մտածողության հոսանք, քաղաքական մի ուժ, որը նպատակ դրեց պայքարելու նրանց դեմ, ովքեր փորձում էին ու փորձում են մեր պետությունը զրկել իր ազգային բովանդակությունից: Ղարաբաղյան պայքարով էություն ստացած, Անկախության հռչակագրով բանաձեւված մեր Անկախ Պետականությունը պետք է ունենա ազգային բովանդակություն: Որոշ շրջանակներ փորձեցին ու այսօր էլ փորձում են այն տեսնել բովանդակությունից զուրկ ինչ-որ վարչատարածքային միավոր:

Մենք թե՛ իշխանության, թե՛ մտավորականության եւ թե՛ հասարակության շարքերում առկա ազգային բոլոր ուժերի հետ միասին հաջողեցինք.

մեր անկախ պետականությանը մղել՝ տեր կանգնելու Ղարաբաղի ազատագրական պայքարին,

մենք հաջողեցինք կատարել իշխանափոխություն, երբ այդ իշխանությունը համարձակվեց ցուցադրել ղարաբաղյան հարցում զիջողական տրամադրություններ,

մենք հաջողեցինք ազգային պառակտման ճիգերին դեմ կանգնել եւ կատարել հայրենիքի բարոյական պարտքն ակամա արտերկրում հայտնված մեր ժողովրդի կարեւոր հատվածի հանդեպ՝ հաստատելով երկքաղաքացիության օրենքը,

մենք հաջողեցինք Սփյուռք-Հայրենիք կապերի կարգավորման համար ստեղծել Սփյուռքի նախարարություն,

մենք հաջողեցինք պաշտոնական Երեւանին մղել միանալու Սփյուռքի ճիգերին Հայկական ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում,

մենք հաջողեցինք մղել Հայաստանի այսօրվա իշխանություններին նահանջելու իրենց բռնած ուղուց հայ-թրքական արձանագրությունների ստորագրման ու վավերացման հարցում: Վկա՝ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը եւ ՀՀ նախագահի վերջին շրջանի ելույթները: Սակայն շտապեմ ավելացնել, որ ձեռք բերած հաջողությունները բավարար չեն եւ պետք է շարունակել պայքարը մինչեւ այն պահը, երբ ՀՀ-ն հետ կքաշի իր ստորագրությունն այդ չարաբաստիկ արձանագրություններից:

Սակայն, պետք է ասեմ նաեւ հետեւյալը. Սփյուռքում այսօր լսվող՝ Սփյուռքն առանձնաբար կազմակերպելու, Արեւմտահայաստանի դատին առանձնաբար տեր կանգնելու, Ցեղասպանության հարցն առանձնաբար հետապնդելու ձայները, կոչերը ուրախացնում, քաջալերում են նույն ապազգային տարրերին, որոնք օր առաջ փորձում են ձերբազատվել համահայկական հարցերից:

Խնդիրը բարձրաձայնում եմ, բայց նպատակ չունեմ հարցերը սրել: Իմ նպատակն է սթափեցնել եւ համահայկական հարցերի լուծմանն ի խնդիր միասնականություն ստեղծել:

***«Դրօշակ».-*** *Առանձնաբար Սփյուռքի կազմակերպական կառույց ստեղծելու նկատելի խմորումները Հայաստանի պետության նկատմամբ անվստահությա՞ն արդյունք են, թե՞ կան նաեւ այլ պատճառներ:*

**Հրանտ Մարգարյան.**- Նախ՝ Սփյուռք հասկացությունն իբրեւ մեկ ամբողջական միավոր գոյություն չունի: Կան սփյուռքյան տարբեր գաղթօջախներ: Առանձին կառույց ձեւավորել ի՞նչ անելու համար: Նման կառույցը կամ պետք է ունենա զուտ սփյուռքյան հարցեր իր օրակարգի վրա, կամ՝ համահայկական հարցեր: Սփյուռքյան այդ ի՞նչ հարցեր են, որոնց համար առանձին կառույց է անհրաժեշտ, որքա՞ն նմանություն ունեն իրանահայության հարցերը, օրինակ, կանադահայության հարցերի հետ, կամ սիրիահայության հարցերը՝ ֆրանսահայության հարցերի հետ, կամ լիբանանահայության հարցերն արգենտինահայության հարցերի հետ: Իսկ եթե խոսքը վերաբերում է համահայկական հարցերին, ապա դրանց համար անհրաժեշտ է համահայկական կառույց:

Առանձին կառույց ձեւավորելով՝ մենք մեր մեջ կստեղծենք հարցեր եւ կհեռանանք համահայկական հարցերից, իսկ ինչպե՞ս պետք է պատկերացնել համահայկական նույնանման հարցերի վերաբերյալ առանձնաբար ցուցաբերված կեցվածքները: Կարո՞ղ են լինել տրամագծորեն տարբեր մոտեցումներ, քաղաքականություն, գործունեություն ազգի տարբեր հատվածների կողմից ազգին վերաբերող միեւնույն հարցերի նկատմամբ: Չի կարելի նաեւ մտածել, թե համահայկական հարցերը մեր պետականության հարցերը չեն, կամ մեր ժողովրդի մեկ մասի, կարեւոր մեկ մասի հարցերն են: Մենք մեկ ազգ ենք եւ միասնաբար ունենք խոցված ընդհանուր արժանապատվություն, միասնաբար ժառանգներն ենք 20-րդ դարի առաջին ցեղասպանության: Մենք մեկ ազգ ենք եւ միասնաբար ունենք կորուսյալ Հայրենիք, ոտնահարված իրավունքներ, մենք մեկ ազգ ենք եւ ունենք մեկ դատ, մեկ միասնական պայքար:

Անընդունելի են նաեւ խոհեմության քողի տակ թաքնված այն կարծիքները, թե կա պետական շահ եւ ազգային շահ, եւ պետությունը միշտ չէ, որ կարող է ազգային շահերին հետամուտ լինել: Ճիշտ չէ, անընդունելի է այս մոտեցումը: Եթե խոսքը մեր պետականության մասին է, այն ազգային պետականություն է, եւ երբ պետականությունը կշեղվի իր էությունից, մեր խնդիրը նրան ճիշտ հունի մեջ դնելն է, այլապես՝ ինչ պետք է ազգին, պետք է մեր պետականությանը, ինչ պետք է մեր պետականությանը՝ պետք է նաեւ մեր ազգին:

Այսուհանդերձ ընդունում ենք, որ խնդիրը գոյություն ունի: Այո, կա համահայկական կառույցի անհրաժեշտություն, եւ այդ կառույցը մեր պետականությունն է: Ընդլայնենք Ազգային ժողովի կազմը կամ առաջացնենք վերադաս համահայկական նոր սենատ, դարձնենք սենատը համահայկական, որտեղ նաեւ ներկայացուցիչներ լինեն արտերկրից: Ճիշտ կլինի, որ սենատը ընտրվի համամասնական ցուցակով՝ շրջանային կամ համասփյուռքյան մակարդակով, թող նրանք մասնակից լինեն Ազգային ժողովի բոլոր քննարկումներին, սակայն նրանց վերապահենք համահայկական օրակարգերով վճռական ձայնի իրավունք: Առաջարկությունս դեռ լուրջ քննարկում ու մշակում է պահանջում, բայց այն նոր գյուտ չէ, այդպես են վարվել նաեւ այն պետությունները, որոնք ունեն մեծ սփյուռք:

***«Դրօշակ».****- Ի՞նչ կտա մեզ համահայկական Ազգային ժողովը:*

**Հրանտ Մարգարյան.**- 1. Մեր պետությունն իրապես կդառնա համայն հայության պետություն, արտերկրի հայությունը ուղղակի մասնակից կդառնա պետականության գործին: Այդպիսով ամբողջական կդարձնենք այն գործընթացը, որ սկսեցինք երկքաղաքացիության օրենքի ընդունումով:

2. Նոր կառույց ու տարանջատման առիթ չի ստեղծվի:

3. Սփյուռքը ուղղակի ընտրված պատգամավորների միջոցով մասնակից կդառնա համահայկական եւ երկրին վերաբերող հարցերի վճռահատման եւ որոշումների գործադրմանը վերահսկելու մեջ:

4. Սփյուռքում եւս համամասնական ընտրակարգով ընտրությունների կազմակերպումը լուրջ խթան կհանդիսանա սփյուռքյան կազմակերպական կառույցների համար զբաղվելու անկազմակերպ համայնքներով եւ մեր հայկական կազմակերպական ցանցի մեջ առնելով բոլոր այն հայորդիներին, որոնք այսօր ինչ-ինչ պատճառներով հեռու են մնում մեզանից եւ մենք եւս չենք զբաղվում նրանցով: Սփյուռքյան կյանքում կվերականգնվի մրցակցությունը, ինչն անհրաժեշտ է զարգացման եւ կենսունակության համար:

5. Երիտասարդությունը, որ այս դարում ընդհանրապես անտարբեր է գաղութային կազմակերպական հարցերի նկատմամբ եւ ավելի հետաքրքրված է

ընդհանուր հարցերով, հավելյալ խթան կունենա հայկական կյանքի հետ կապվելու, երբ նրանց համահայկական-պետական գործերին մասնակցելու ասպարեզ տրվի:

Փաստորեն սկսվում է մի նոր ժամանակաշրջան, հայությունը կազմակերպվում է ոչ միայն իր ինքնությունը պահպանելու, այլեւ համահայկական հարցերի մեջ դերակատար դառնալու համար:

Կարծում եմ՝ ավելորդ է այլեւս անդրադառնալ որոշ հոսանքների՝ առանձնանալու հիմնավորումներին, բարձրացած աղմուկին, բամբասանքներին, անմակարդակ խոսակցություններին, թե մենք այստեղից ենք, նրանք այնտեղից, թե մեր հայրենիքը Արեւմտահայաստանն է, նրանցը՝ Արեւելահայաստանը կամ նույնիսկ Արեւելահայաստանի մի մասը, թե այնտեղ կոռուպցիա կա, մաֆիա, եւ ամեն ինչ օտար է, անհուսալի ու անիմաստ: Չեմ ուզում անդրադառնալ այս ամենին, մեր մակարդակին հարիր չէ:

Մեր երկրում, ցավոք, շատ բան լավ չէ: Ասում եմ՝ լավ չէ, ու սրտիցս արյուն է գնում, բայց հենց այսպես, այս սրտացավությամբ պետք է վերաբերվել իրողությանը: Շատ բան լավ չէ, ուրեմն մեր Հայրենիքը պետք ունի մեզ, մեր հայրենասիրության, մեր բարյացակամ վերաբերմունքին, մեր զոհաբերություններին: Եթե ամեն ինչ լավ ու հրաշալի լիներ, գուցե մեր հայրենասիրությունն էլ անհրաժեշտ չլիներ, գուցե շատերս մեզ այլեւս մեր հայրենիքի համար ավելորդ զգայինք:

Բայց այսօր ահռելի գործ ունենք: Ե՛վ Հայաստանում, ե՛ւ Արցախում, ե՛ւ Սփյուռքում ու աշխարհում:

***«Դրօշակ».-*** *ՀՅ Դաշնակցության այս տարվա տոնին նվիրված պատասխաններում արձանագրված կազմակերպության 120-ամյա տարիից 20-ն առանձնացված է՝ մասնանշելով նորանկախ Հայաստանում ՀՅԴ-ի ծավալած գործունեությունը: Մոնրեալում Ձեր ելույթում Դուք հիմնականում կենտրոնացել եք ՀՀ-ում մեր կազմակերպության ունեցած դերակատարությանը: Ձեր գնահատմամբ՝ ինչպիսի՞ն է այդ դերակատարությունը:*

**Հրանտ Մարգարյան.-** Մենք Հայաստանում սկսեցինք աշխատել, երբ, իբրեւ կազմակերպություն, ունեինք միայն երկու տարվա՝ 1918-1920 թվականների պետականության պայմաններում աշխատելու փորձ: Դրանից առաջ մեր ունեցածը, ազգային ազատագրական, հեղափոխական պայքարի փորձն էր, իսկ 1920 թվականից հետո, սփյուռքյան իրականության մեջ աշխատանքը, ամբողջությամբ այլ փորձառություն:

Բայց մենք մեր նվիրվածությամբ, մեր միս ու ոսկորով, ամբողջական պատասխանատվությամբ, որ տածում էինք մեր կուսակցության անցյալի, մեր նահատակ ընկերների, արտերկրում թողած մեր ընկերների հանդեպ, աշխատեցինք ոչ մի այլ շահ ու հաշիվ չունենալով, բացի Հայրենիքի ու մեր ժողովրդի շահը:

Աշխատեցինք ու միաժամանակ սովորեցինք, թե ինչպես պետք է աշխատել պետականության պայմաններում, ինչ է պետականությունը ընդհանրապես: Ճանաչեցինք մեր ժողովրդին, փորձեցինք մեզ ներկայացնել նրան: Ու տեսանք սկզբնական ինչ-որ միֆի, անորոշ պատկերացումների խորհրդային ավերիչ հակաքարոզչությունից զատ, ինչքան բան չգիտի կամ խեղաթյուրված պատկերացումներ ունի ժողովուրդը մեր մասին:

Մենք մեզ հետ եղանք անկեղծ, հարազատ, չգայթակղվեցինք պետական հանգամանքներով, արկածախնդրությունների գիրկը չընկանք, հեշտ ճանապարհներ չփնտրեցինք, ջանացինք ճամփա հարթել, մեր կազմակերպության վաստակը չմսխեցինք, փորձեցինք ավելացնել:

Կարո՞ղ ենք ասել այսօր՝ ժողովուրդը ճանաչում է մեզ, ինչպես որ կանք, մենք կարողացա՞նք մեզ լսելի դարձնել բոլորին: Անշուշտ, պետք է ասեմ՝ ոչ: Դեռ ճամփա ունենք կտրելիք:

Քաղաքական կյանքում անկեղծ լինելը, հայրենասիրությունը, անսակարկ նվիրվածությունը հասկանալի դառնալու, ընկալվելու, համակրանք շահելու համար բավարար չեն: Քաղաքական կյանքում կան ուղղություններ, ռեալ շահեր եւ կան իրականությունները խեղաթյուրելու, մթնոլորտ ստեղծելու միջոցներ:

Մենք հաճախ խուսափում ենք մեր հասցեին օրն ի բուն հնչող քննադատություններին պատասխանելուց. դա մեզանից շատ է ժամանակ խլելու եւ քննադատողների վերաբերմունքն էլ, միեւնույնն է, չի փոխվելու: Ու նաեւ մտածում ենք՝ որ իրենք իրենց քաղաքական գործիչներ համարող անձինք եթե ավելի շատ խոսում են, թե Դաշնակցությունն ինչ պետք է անի, ինչ չպետք է անի, էլ ինչու են այլ կուսակցություններ ստեղծել կամ անդամագրվել այլ կուսակ-



ցությունների: Անվերջ մեզ խելք սովորեցնելու փոխարեն, թող իրենք գործեն:

**<u>«Դրօշակ».</u>**- *Այսուհանդերձ, արժե անդրադառնալ ավելի հաճախ հնչող մի քանի քննադատության. տարբեր առիթներով շատ են խոսում, որ Դաշնակցության այսօրվա կեցվածքները չեն համապատասխանում նախորդ իշխանությունների նկատմամբ ունեցած կեցվածքներին:*

<u>Հրանտ Մարգարյան.</u>- Դաշնակցությանը մեղադրում են անհետևողականության մեջ: Իբր Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք իշխանության դեմ սանձարձակ պայքարի ենք դուրս եկել, բայց Ռոբերտ Քոչարյանի ժամանակ և այսօր նույն երևույթների ու պատճառների նկատմամբ նույնանման կեցվածք չենք ունենում: Նաև մեղադրվում ենք, որ նույն երևույթների համար երբ մաս էինք կազմում կոալիցիային, լռում էինք, իսկ այսօր չենք վարանում քննադատական կեցվածքներով հրապարակ գալ:

Մեզ համար երբեք իշխանությունների դեմ պայքարն ինքնանպատակ չի եղել, երբեք իշխանության հասնելն ինքնանպատակ չի եղել: Թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանի, թե՛ Ռոբերտ Քոչարյանի և թե՛ Սերժ Սարգսյանի նախագահության ժամանակաշրջանում մենք առաջնորդվել ենք երկու կարևոր սկզբունքներով.

<u>ա.</u> Նկատի ունենալով, որ անկախությունից ցայսօր երկիրը դիմագրավում է արտաքին վտանգ, ուրեմն՝ չանել այն ամենը, ինչը կարող է վտանգել երկրի քաղաքական կայունությունը, անվտանգությունը.

<u>բ.</u> Արտաքին վտանգը դիմագրավելու համար կանգնել օրվա իշխանությունների կողքին:

Այդպես ենք վարվել միշտ, ունեցել ենք կարմիր գծեր, որ երբեք չենք անցել: Կուսակցության ղեկավար են արտաքսել երկրից, մենք չենք անցել սահմանը, կուսակցություն են փակել՝ դարձյալ այդկերպ ենք վարվել: Կուսակցությունը հալածված էր, պատասխանատու ընկերներ էին բանտում, մեր զինակից ընկերները շարունակում էին կռվել առաջին դիրքերում, երկրում մենք թշնամի էինք ընկալվում, իսկ արտասահմանում մեր Հայ դատի հանձնախմբերը համագործակցում էին այդ հալածողների արտգործնախարարության հետ:

Եվ այս ամբողջը Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք, մեր անկախության ողջ ժամանակաշրջանի ամենավատ օրերին, երբ տնտեսությունն իսպառ փլփլվում էր, երբ մոլեգնում էր կոռուպցիան, սեփականաշնորհման անվան տակ թալանվում էր ազգն ու պետությունը: Երբ ամեն ինչ արվում էր օր առաջ ձերբազատվելու Ղարաբաղից ու Ղարաբաղի պայքարից:

Ճիշտ վարվեցինք մենք, թե ոչ. միակ դատավորը պատմությունն է: Մենք հավատում ենք՝ ճիշտ ենք վարվել: Պատկերացնում եք, եթե այդպես չվարվեինք և արդյունքում՝ ազգային, մանավանդ հարցերում՝ Ղարաբաղի հարցում, մեր ազգային ինքնիշխանության հարցում ձախողումներ ունենայինք: Սերունդները մեզ չէին ների: Միշտ հիշենք՝ Առաջին Հանրապետության անկման ներքին ու արտաքին հարցերը որքան ճակատագրական եղան, նաև չմոռանանք՝ Ղարաբաղյան պայքարում մենք հաղթեցինք, որովհետև Ադրբեջանն ապրում էր ներքաղաքական անկայուն իրավիճակ:

Իսկ նախագահական երեք ժամանակաշրջանները մենք իրավունք չունենք նույն կերպ գնահատել: Լևոն-Տեր Պետրոսյանի շրջանը բնորոշվում էր իբրև մի ժամանակ, երբ ոչ միայն զարգացում չկար, այլ համատարած քայքայում էր: Կորուստներ, ազգային-քաղաքական հարցերում՝ ընդհանրապես ապազգային քաղաքականություն, Արցախի հարցում՝ պարտվողական տրամադրություններ, իսկ ներքաղաքական կյանքում՝ հալածանքներ ու բռնություններ, ազգա-

յին պառակտում: Ռոբերտ Քոչարյանի շրջանը բնորոշվում է ներազգային հարցերում անզիջող քաղաքականությամբ, առկա էր զարգացում: Այդ զարգացման ընթացքն էր, որ դանդաղ էր եւ ոչ բավարար: Այսօրվա ընթացքի մեջ գտնվող փուլն էլ բնորոշվում է ազգային հարցերում անորոշ, անվստահ, զիջողական քաղաքականությամբ: Տնտեսական հարցերում էլ վտանգավոր տեղատվության մեջ ենք հայտնվել: Ու համաշխարհային տնտեսական ճգնաժամով էլ ամեն ինչ բացատրելը ճիշտ մոտեցում չէ:

Հակառակ այս հսակ զանազանությունների, հակառակ այն բանի, որ Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք մենք մաս էինք կազմում իշխանություններին, այսինքն կոալիցիայի մեջ էինք, այդուամենայնիվ զգուշացնում էինք, որ մեր իշխանությունը սահմանափակ է եւ չէինք վարանում նաեւ հրապարակավ հնչեցնել այն բոլոր հարցերը, որոնց դեմ էինք: Որ ասածս ուռճացված ինքնադրվատման ձեւ չստանա, մեջբերեմ 2005 թվականին (երբ Ռոբերտ Քոչարյանն էր նախագահ եւ մենք դեռեւս կոալիցիայի անդամ էինք) Դաշնակցության 115-ամյակի տոնակատարության ընթացքում, Երեւանի մեջ, ելույթիցս մի բաժին: Խոսքս հրապարակավ ուղղելով նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ ասացի. *«Պրն. Նախագահ, ՀՅԴ-ի համար մերժելի է անարդարությունը՝ անկախ այն բանից, թե այն ո՛ւմ կողմից եւ ո՛ւմ դեմ է իրականանում: Մեր ժողովուրդը 9-դարյա օտարի բռնիշխանության հետ է նույնացրել անարդարությունը եւ այսօր՝ անկախ պետականության պայմաններում, իրավացիորեն չի կարողանում հանդուրժել անարդարության որեւէ դրսեւորում:*

*Իսկ այսօր մեր երկրում՝ ազատ ու անկախ մեր հայրենիքում, որի Նախագահը Դուք եք ու մենք՝ ձեր կողքին, անարդարություն կա. դրա համար մենք եւ Դուք պատասխանատու ենք:*

*Անարդարության պատճառ-հետեւանքներն են՝ երկրում առկա կոռուպցիան, աղքատությունը, անպատժելիության մթնոլորտը: Այսօր կոռուպցիայի ու աղքատության դեմ իրական ծրագրված պայքար գրեթե չկա երկրում: Դուք եւ մենք մեր նախընտրական ծրագրերում շատ ենք խոսել այդ մասին, պարտավոր ենք հասարակությանը տեսանելի, լուրջ, իրական հույս ներշնչող քայլեր ձեռնարկել: Մենք միշտ պատրաստ ենք եղել ու պատրաստ ենք այդ ճանապարհին պատասխանատվություն ստանձնել:*

*Դաշնակցությունը արդարության համար պայքարող ազատամարտիկների կազմակերպություն է, մենք հաստատակամորեն շարունակելու ենք պայքարն աղքատության ու կոռուպցիայի դեմ:*

*Վաղուց ի վեր մեր հասարակությունը վերածվել է երկու անհավասար շերտերի. մի շերտը «արտոնյալների» այն խավն է, որ վայելում է իշխանությունների ամբողջական զորակցությունը, մոտ է նրանց եւ հովանավորվում է նրանց կողմից: Իսկ մյուս խավը՝ մեծամասնության խավը, հիմնականում զուրկ է պետական հոգատարությունից, անտարբեր է ու լքված:*

*Չցանկանալով ստեղծել համընդհանուր տրամադրություն՝ սակայն չեմ կարող չհիշատակել, որ այսպես կոչված «արտոնյալների» շարքերը կազմում են մի շարք օլիգարխներ, քաղաքային հեղինակություններ, չինովնիկներ ու իշխանիկներ: «Արտոնյալներ», որոնց համար մատչելի են պետական պաշտոնը, սեփականաշնորհման բարիքները, մաքսային ու հարկային անօրինական դյուրությունները ու կարելիությունները, ինչի շնորհիվ նրանք հայտնվում են անմրցելի դիրքերում, հասարակությունից վեր ու հասարակության դեմ կարգավիճակում:*

*Հովանավորչությամբ են լուծվում շատ ու շատ հարցեր, եւ առավելաբար այդ իրողություններն են, որ ստեղծում են անարդարության մթնոլորտ: Սա առավել անհանդուրժելի է, քան սոցիալական-տնտեսական դժվարությունները: Այս երեւույթները յուրաքանչյուր քաղաքացու առօրյա կյանքն են դառնացնում: Պետք է սթափվել:*

*Պրն. Նախագահ, այս երեւույթները ձեր իշխանության օրոք չեն ստեղծվել, Դուք եւ մենք այն ժառանգել ենք անցյալից, բայց դրանք շարունակվում են նաեւ մե՛ր օրոք. մենք պարտավոր ենք ծրագրված, կազմակերպված պայքար ծավալել երկրում կարգապահություն ու օրինականություն, անաչա՛ռ կարգապահություն ու օրինականություն հաստատելու համար՝ մեր պետականության ու հոգատարության սահմանների մեջ առնելով մեր ժողովրդի բոլոր շերտերին, բոլոր-բոլոր քաղաքացիներին»:*

Ձեզ եմ թողնում դատողությունը՝ լո՞ւռ ենք մնացել այդ օրերին: Այսօր, երբ այդ երեւույթները շատ ավելի են բարդացել, կարելի է ամբողջությամբ կրկնել ասվածը, հոգ չէ, թե այն ժամանակ մենք իշխանության մաս էինք կազմում, իսկ այսօր ընդդիմադիր ենք:

*<u>«Դրօշակ».</u>- Ավելի հաճախ հնչում է մի այլ մեղադրանք. ՀՅԴ-ն կեղծ ընդդիմություն է:*

<u>Հրանտ Մարգարյան.</u>- Ասում են՝ կեղծ ընդդիմություն ենք, քանի որ ընդդիմության, այսինքն Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ չենք համագործակցում: Իսկ մյուս ուժերը, որ միացել են Տեր-Պետրոսյանին, համագործակցո՞ւմ են, թե՞ նրա կողմից կառավարվում են: Նրանք ընդդիմության դաշտում ընդունել են Տեր-Պետրոսյանի իշխանությունը, այնտեղ այլեւս չկա ժողովրդավարություն, ի չիք է դարձել կուսակցությունների ինքնուրույնությունն ու արժանապատվությունը: Այնտեղ կռապաշտություն ու բռնատիրություն է: Ասում են՝ եթե կեղծ չենք, եկեք ընդունենք այս իշխանությունը, կամ այլ խոսքով՝ եկեք մեր հասկացած ձեւով համագործակցենք: Իհարկե, զարմանալի է՝ եթե մենք կեղծ ենք, ինչո՞ւ են ուզում մեզ հետ համագործակցել, մի՞թե ցանկալի է կեղծ ուժի հետ համագործակցություն:

Մենք 10 տարի իշխանությունների հետ եղանք, բայց չկորցրինք մեր ինքնուրույնությունն ու ինքնաղեկավարումը, իսկ շանտաժով համագործակցության հրավերները կարող են միայն ծիծաղելի լինել:

Մեղադրանք են հնչեցնում նույնիսկ բարյացակամ մարդիկ. Դաշնակցությունը ինչո՞ւ չի հաջողում:

Ասում են՝ Հայաստանի Հանրապետությունում 20 տարվա անցյալ ունենք, ինչո՞ւ դեռ իշխանություն չենք, ինչո՞ւ ընտրություններում այդքան քիչ են ձեր քվեները: Ինչո՞ւ չենք կարողանում վերացնել երկրում առկա դժվարությունները: Մի խոսքով՝ ինչո՞ւ այն չենք, ինչ պետք է լինեինք:

Ակնկալիքները մեզնից մեծ են: Չեմ ուզում պաշտպանվել, չեմ ուզում ինքնարդարացման ավելորդ ճիգ թափել, որովհետեւ ակնկալիքները պարտավորեցնող են, եւ լավ է, որ դրանք լինեն: Մենք եւս մեզանից գոհ չենք: Երբ մենք մեզանից գոհ լինենք ու ժողովուրդն էլ դադարի մեզանից ակնկալիքներ ունենալ, կնշանակի՝ մենք էլ ենք դարձել հերթական կուսակցություն, մի օր լավ, մի օր վատ՝ կանգնի կգնա:

Ամեն ինչ համեմատական է: Մենք մեզ ո՞ւմ հետ ենք համեմատում: Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքը խաբուսիկ է, եղել են քաղաքական ուժեր՝ կուսակցություններ, քաղաքական գործիչներ, նախագահի թեկնածուներ, աստղի պես հայտնվել են ասպարեզում, ստացել մեծաքանակ քվեներ, ու հաջորդ ընտրություններին կամ արդեն քաղաքական գործով չեն զբաղվել, կամ ունեցած քվեները բառացիորեն մի քանի տոկոս են կազմել: Հիմա մենք մեզ համեմատե՞նք դրանց հետ, դրանց ո՞ր վիճակի հետ:

Իսկ անկախությունից հետո այդ ո՞ր քաղաքական ուժն է իշխանության հասել, միշտ էլ իշխանությունն է վերարտադրվել, բայց որ այդպես չի մնալու եւ մենք փոխելու ենք կյանքը մեր երկրում, վայրկյան իսկ չեմ կասկածում:

Դաշնակցության գոյությունը պայմանավորված է հայ ժողովրդով, նրա ներկայով, անցյալով ու ապագայով: Առանցքն է Դաշնակցությունը, որ հավատարիմ երեք դարերի վրա երկարող իր ընթացքին՝ ներկան պետք է արձանագրի, իր գործով ինքզինքը շարունակաբար հաստատի, իրենը պարտադրի ժամանակին, պայմաններին, խոչընդոտներին, արգելքներին եւ անկարելիներին:

Եթե Դաշնակցության գոյության պատճառը Հայաստանն է ու հայ ժողովուրդը, եթե նրա անվտանգ գոյությունն ու զարգացումն է մեր սրբություն սրբոցը, ապա այդ նպատակին հասնելու ամենակարեւոր միջոցը Հայկական Անկախ Պետականությունն է: Դաշնակցությունն իր պատմության ամենատխուր պահին, Հայկական Ցեղասպանությունից անմիջապես հետո կամ դրան զուգահեռ, ծնունդ տվեց Անկախ Պետականությանը: Հենց միայն այս փաստն առանձնաբար բավարար է, որ ՀՅ Դաշնակցությունը հպարտությամբ կանգնի պատմության դատաստանի առջեւ: Այսօրվա մեր պետականությունը շարունակությունն է մեր կերտած անկախության. եթե չլիներ 1918 թվականի անկախությունը, մեծ հավանականությամբ չէինք ունենա նաեւ այսօրվա անկախ Հայաստանը: Գուցե նույնիսկ չէինք լինի եւ մենք... Չգիտեմ:

ՀՅ Դաշնակցության դերը մեծ է մերօրյա պետականաշինության, պետականակերտման գործում: Իշխանության կազմում թե ընդդիմության մեջ՝ մեր գործը ուղղված է եղել նույն նպատակին՝ հայոց պետականության կայացմանը եւ հզորացմանը:

Այո, մենք վերելքի մեկնարկային նպաստավոր դիրքում ենք այսօր:

Եվ որպեսզի վերելքը լինի թռիչքային, մեզ պետք է

վերակազմակերպում Սփյուռքում, արդարություն, ժողովրդավարություն եւ ազգային հզոր կազմակերպվածություն Հայրենիքում, ու վերջապես՝ միեւնույն նպատակի ու գերխնդիրների շուրջ համախմբվածություն, միասնականություն:

***«Դրօշակ».*** *- Ինչպե՞ս է վերակազմակերպվելու Սփյուռքը:*

**Հրանտ Մարգարյան.**- Սփյուռքը նոր իրականություններ է դիմագրավում, գլոբալիզացիայի արդյունքում համայնքային կազմակերպված կյանքից հեռանում են ու հետզհետե օտարանում ավելի մեծ թվով հայորդիներ, մասնավորաբար՝ երիտասարդներ: Կազմակերպված գաղութներում տեղի են ունենում ներքին նոր տեղաշարժեր՝ առաջացնելով նոր պահանջներ: Ի հայտ են գալիս նոր եւ հետեւաբար անկազմակերպ գաղութներ, որոնք պետք է մաս կազմեն հայկական ուժականության: Եվ մենք չենք կարող անտարբեր լինել նրանց նկատմամբ: Ցավոք սրտի, նաեւ ականատես ենք դասական Սփյուռքում հաստատված նոր հայերի՝ կազմակերպված մեր համայնքների հետ համարկման, իսկ մեր համայնքները այդ հայորդիներին իրենց գրկի մեջ ընդունելու խնդիր ունեն:

Ժամանակն է ընդլայնել մեր ազգային կազմակերպվածության ցանցը, առաջացնել կազմակերպական նոր ձեւեր, ազգի առանձին շերտերին ինքնակազմակերպվելու ու ինքնաղեկավարվելու հնարավորություններ պետք է տալ: Պետք է ազատվենք կաղապարներից, սովորամոլությունից, ծխականությունից, եւ փոխենք մենք մեզ, որ կարողանանք տեր կանգնել մեր առաքելության՝ ավելի ու ավելի մեծ թվով հայերի ներգրավելով ազգային կազմակերպության մեջ, եւ մրցակցության պայմաններում նվաճենք ժողովրդին առաջնորդելու իրավունքը:

Համայնքի մեր առօրյա կյանքում պետք է ամրենք նաեւ համահայկական օրակարգերով՝ մեզ համարելով համահայկական մեծ ընտանիքի մաս: Հատվածականությունը, ընդհանուրից անջատվելը, ազգի մեջ բաժանարար գծեր անցկացնելը միմյանց փոշիացնելու ուղի են, վտանգելու են ազգի ուժականությունը, վտանգելու են բոլորիս ներկան ու ապագան: Ազգը տկարանալու է, իսկ հատվածը լուսանցք է մղվելու:

Կազմակերպվենք, վերակազմակերպվենք իբրեւ մեկ ամբողջական ազգ: Մեզ արտերկրում համարենք հայրենիքի, հայրենիքում՝ մեր ժողովրդի առանցքի շարունակությունը, համախմբվենք համահայկական օրակարգերի շուրջ:

Որոնք են այդ օրակարգերը.

- Հայկական ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված մեր երթին տալ նոր ուժականություն: Նպատակը՝ մինչեւ Մեծ եղեռնի 100-ամյակ հասնել Ցեղասպանության միջազգային ճանաչման, պարտավորեցնել Թուրքիային ընդունելու եւ տեր կանգնելու իր պատասխանատվությանը:
- Սփյուռքում կուտակած բարոյական կապիտալով մասնակից լինել, դերակատար դառնալ Հայաստանի Հանրապետության պետականաշինության ու քաղաքական կյանքին: Այս առիթով արդեն ասացի համահայկական Ազգային ժողովի կազմության մասին:
- Քաղաքական կազմակերպված աշխատանքով ստեղծել միջազգային նպաստավոր հանրային կարծիք Արցախի, Ջավախքի հարցերով: Տեղական ազդեցությունները օգտագործելով՝ նոր հնարավորություններ ստեղծել Հայաստանի Հանրապետության հեղինակության բարձրացման, նրա տնտեսական եւ ընդհանրապես զարգացման համար:

***«Դրօշակ».*** *- Իսկ Հայրենիքո՞ւմ ինչ ծրագրեր են նախանշվում:*

**Հրանտ Մարգարյան.**- Պետականությունը պետք է լինի ազգային եւ արդար, որպեսզի մնա հարազատ իր կոչմանը, առաքելությանը: Բայց մեր երկրում, որվա իշխանությունների պատճառով, վտանգված է ազգային ուղեգիծը եւ չկա արդարություն:

Դաշնակցությունը մեծ ներդրում է ունեցել երկիրն իր ազգային ուղեգծի մեջ պահելու հարցում, սակայն դա բավարար չէ: Անհրաժեշտ է ազգային ծրագիր, ռազմավարություն, հայեցակարգ եւ այդ ամենով առաջնորդվող, այդ ամենը հարգող ու գործադրման ունակ, անհրաժեշտ քաղաքական կամք, պայքարի վճռականություն, հետեւողական նկարագիր ունեցող քաղաքական ղեկավարություն: Այս ամենը պետք է Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգ ներկան ու ապագան երաշխավորելու համար:

Մեր ժողովրդի զարգացման բնական պայմաններն են արդարությունն ու ազատությունը, օրենքի ու կարելիությունների սահմաններում հավասարու-



թյունը: Այդ ամենը մեր երկրում դեռեւս թերի է, հիվանդ, հիմնական լուծումների կարոտ: Համոզված ենք՝ լուծումները բերելու է Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որ հավատում է սոցիալական արդարության, ունի ծրագիր, անցել է պատմության քննությունը, բռնության, անարդարությունների դեմ պայքարը եղել է նրա կենսակերպը, մտածելակերպն ու դավանանքը: ՀՅ Դաշնակցությունն այդ բոլոր հարցերի համար ունի լուծումներ, մենք փոխելու ենք մեր կյանքը:

Մենք փոխելու ենք իրավիճակը՝ ընթանալով բացառապես մեր բացած ճանապարհով, մեր ժողովրդի իրական կյանքն ու պայմանները նկատի ունենալով: Օտարի խաղը մենք չենք խաղալու, օտարի ճըրտած կեռույթով չենք շարժվելու: Ու ամենակարեւորը՝ մեր ուղեգծին՝ ազգային ուղեգծին չենք դավաճանելու:

Բայց հարցերի հարցը ազգի մեկության, համախմբվածության, միասնականության պահպանումն է:

Միասնականություն, որն, անշուշտ, միօրինակություն, սափակություն ու միաձեւություն չի նշանակում: Միեւնույն նպատակին հասնելու հարցում մեզ համախմբվածություն է պետք: Միասնականությունը միակարծություն չէ. մենք ապրելու ենք մեր կյանքը, հաճախ մրցակցության ու նույնիսկ պայքարի մեջ, սակայն նույն նպատակին ենք ձգտելու տարբեր ուղիներով: Մեզ համար, բոլորիս համար անընդունելի պետք է լինի այն ամենը, ինչ կարող է մեզ հեռացնել մեր նպատակից:

Հայկական Անկախ Պետականության հզորացումն ու ամրապնդումը մեր գերխնդիրն է:

Այս հանգրվանում մեր գերխնդիրն է Արցախի փաստացի ազատագրումը: Ազգը պետք է համախմբվի, միասնականություն ցուցաբերի այս հարցում:

Արցախը մեր արժանապատվությունն է, մեր պետականության ազգային էության ու ընթացքի երաշխավորը: Մենք դեռ պատերազմի մեջ ենք: Ճիշտ է, պատերազմն այսօր տեղի չի ունենում սահմանի երկայնքով, սակայն պատերազմ է, որն ընթանում է բանակցությունների սեղանի շուրջ: Աննկատ է ու բքացնող, սակայն պատերազմ է, Այնտեղ են նաեւ միջազգային ուժերը, որոնք, ճիշտ է, ոչ մի շահագրգռվածություն չունեն՝ Արցախը Հայաստա՞ն կլինի, թե՞ Ադրբեջան, Լաչինը Հայաստանի՞ն կմնա, թե՞ Ադրբեջանին, նույնպես՝ Զանգելանը, բռնագրավված Շահումյանը, Գետաշենը, բայց նրանք ունեն շահեր, տարածաշրջանում հեսապնդվող նպատակներ: Մի կողմում Ադրբեջանն է ու Թուրքիան, նավթն է ու իսլամական աշխարհը, մյուս կողմում՝ մենք ենք ու մեր սարերը, մեր ժողովրդի միակամությունը կամ պառակտումը: Մեզ պետք է Ղարաբաղի հարցում համախմբվածություն, միասնականություն: Մեկ անգամ մենք միասնական եղանք եւ արձանագրեցինք Արցախի դե ֆակտո ազատագրումը, մեզ դարձյալ միասնականություն է պետք՝ այն դե յուրե եւ վերջնականորեն նվաճելու համար:

Ցանկացած հարցի հեսապնդում մեր իրականության մեջ պետք է ունենա զսպման կարմիր գիծ, ոչ մի կերպ պետք չէ վտանգվի Արցախի պայքարը: Արցախի հարցում պետական քաղաքական շրջանակները պետք է ուղղակի զգան ժողովրդային աջակցությունն ու չհամարձակվեն նահանջելու մեր այսօրվա դիրքերից:

Արցախն ազատագրված հայրենիք է: Մենք ավելի հաճախ կորուստներ ենք արձանագրել. սա մեր երկար սպասված հաղթանակն է: Արցախը մեր ազգի իրական վերածնունդն է: Արցախի ազատագրումը հիմնական քայլ է դեպի միացյալ Հայաստանի կերտում:

Արցախը շարունակում է մնալ մեր գերխնդիրը եւ լինելու է այդպիսին, մինչեւ աշխարհն ընդունի փաստը, հաշվի նստի կայացած իրականության հետ, ճանաչի Լեռնային Ղարաբաղի կայացած Հանրապետությունը:

Մենք Արցախի հետ կիսել ենք մեր նույնացված ճակատագիրը: Մենք Արցախի հետ սկսել ու շարունակում ենք պայքարը:

Հայկական իրականությունում՝ Դաշնակցությունն ու Արցախի գործը ունեցել են չարձանագրված, չպայմանավորված, չհայտարարված համագործակցություն, դաշինք, ու մեծ է եղել մեր գործակցության արդյունքը: Մեծ է եղել ու կարող է դեռ մեծ դերակատարություն ունենալ:

Վերջապես, իրողություն է՝ հայկական իրականությունը բաժանվում է ջրբաժանով, որն անցնում է Արցախի հարցի միջով: Մի կողմում նրանք են, որոնց համար Արցախի կյանքը հարց ու գերխնդիր է, մյուս կողմում՝ նրանք, որոնց համար Արցախի հարցը կարեւոր չէ: Իբրեւ կազմակերպված ուժ՝ Արցախի հարցը մեզ համար գերխնդիր է, մեզ հետ են նաեւ մեր ժողովրդի առողջ ազգային տարրերը, մտավորականությունը, շարք հայ գյուղացին, աշխատավորը ու ազգային արժանապատվություն ունեցող հայորդիները:

Այս չարձանագրված, չհայտարարված համագործակցությունը՝ Արցախյան գործոնի ու Դաշնակցության, պետք է լինի այն առանցքը, որի շուրջ կկայանա ազգային միասնականությունը: Միասնականություն, որ ծնունդ կտա ազգային, համահայկական անպարտելի ուժի ձեւավորման:

Միասնականություն, որ պետք է ապահովի բովանդակ ազգի մեկությունը:

Միասնականություն, որ թույլ չի տալու պառակտվել, տարբեր կողմերից թեքվել կամ ջարդվել:

Միասնականություն, որտեղ չհավատանք սուտ ու նոր խոստումներին, չվախենանք նրանց սպառնալիքներից:

Միասնականություն, որտեղ չտրվենք հեշտ ու կարճ ճանապարհներով գնալու գայթակղությանը: Որտեղ այն, ինչ ապահովել ենք արյամբ ու պատերազմով, տանուլ չտանք բանակցությունների սեղանի շուրջ:

Միասնականություն, որ մեզ համար, Հայաստանի Հանրապետության համար հաղթանակ կապահովի, վերջնական հաղթանակ, որ այլեւս իբրեւ ժողովուրդ դադարենք լացող, կոտրված ազգ լինելուց, դադարենք հոխորտացող ու երազող մարդկանց հավաքականություն լինելուց: Դառնանք իրապես հաղթած, ապրող, զարգացող ազգ:

Արցախը չպետք է մենակ մնա: Արցախի անվտանգության, հաջողության համար երաշխավոր պետք է շարունակի լինել Հայաստանի Հանրապետությունը: Արցախը պետք է շահագրգռված լինի, որ Հայաստանը դառնա արդար, ազատ երկիր: Քաղաքականապես կայուն Հայաստանի Հանրապետության երաշխիքը ներազգային կյանքում արդարության ու ժողովրդավարության հաստատումն է:

Մեր միասնականությունը խախտվում է առաջին հերթին Հայաստանի ներկա իշխանությունների վարքագծի պատճառով: Մեր իշխանական վերնախավը չունի հարազատ ժողովրդի քաղաքական հենարան եւ ապավինում է այլ ուժերի, տարրերի, որոնց համար գերխնդիրն այլ է՝ սեփական շահն ու նյութական առավելությունների ապահովումը: Արդյունքում՝ ամեն օր խորանում է ժողովուրդ-իշխանության միջեւ առկա անջրպետը: Օրըստօրե բարդանում է իրավիճակը, վերնախավն ամեն օր ավելի մեծ կախվածության մեջ է ընկնում այդ ուժերից կամ տարրերից: Որքան կախվածությունը մեծանում է, այնքան դըժվարանում է երկրում արդարության եւ ժողովրդավարության հաստատման գործը: Մինչդեռ անհրաժեշտ է քաղաքական կամք ու սկզբունքային կեցվածք դրսեւորել, հետեւողականորեն հետամուտ լինել արդարության եւ ազատության հաստատման, ինչը կապահովի ժողովրդական աջակցություն եւ միաժամանակ՝ հայտնի տարրերի կախվածությունից ձերբազատում:

Միասնականությունը խախտվում է նաեւ որոշ քաղաքական շրջանակների կողմից: Դրօշակ դարձնելով ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները՝ նրանք, սակայն, մի նպատակ ունեն՝ հասնել իշխանության: Համակարգի բարելավումը չէ նրանց նպատակը:

Միասնականությունը խախտվում է նաեւ, երբ փորձ է արվում ազգի մեջ արհեստականորեն պառակտում սերմանել, բաժանարար գծեր քաշել:

Սակայն մենք վստահ ենք մեր ուժերին եւ հավատում ենք մեր ժողովրդի ողջամիտ բանականությանը, ազգային մտավորականությանն ու առանձին քաղաքական ուժերի: Մենք ստեղծելու ենք մթնոլորտ, կացություն, որ ազգային գերխնդիրների շուրջ հայությունը մնա միասնական ու համախմբված:

Մենք կամք, վճռականություն եւ արթուն միտք ունենք եւ ի վերջո հասնելու ենք համայն հայության նպատակների իրականացմանը:

*<u>«Դրօշակ»</u>.- Շնորհակալություն:*

# ՀՅԴ

## քաղաքական հիմնանդատակի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի միջազգային-իրավական լեգիտիմությունը

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր

**...Ժամանակը պիտի բանայ զինուորեալ Զաւակներուդ համար իր փառքի մատեանը լուսաւէջ,**
**Ու իր պատուանդանին վրայ պիտի քանդակէ այդ օրը, որպէս ճիգը անհունօրէն գերմարդկային,**
**Դարերը որպէս գահ պիտի մատուցանէ յամառօրէն ճակատող Հայրենանուէրներուդ ստուերներուն**
**Եւ իր թաւալումը, Հայր, ցեղեր պիտի դաստիարակէ քու Կամքի պատմութեամբ:**

Արամ Չարըգ (Վտարանդի)

Հայ ազգային-ազատագրական շարժման ծավալման որոշակի հանգրվանում ձևակերպված ՀՅԴ քաղաքական հիմնանպատակը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը, հիմնվում է անխոցելի իրավա-քաղաքական փաստարկների վրա, որոնց ժխտելու բոլոր փորձերը հակասության մեջ են ոչ միայն պատմական փաստերի, այլև միջազգային իրավունքի նորմերի հետ:

Հայտնի է, որ ընդհուպ մինչև Հայկական հարցի միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելը, այսինքն՝ 1878 թվականը, Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի, տվյալ դարաշրջանում ընդունված բնորոշմամբ՝ Հայաստանի գոյությունը չէր հերքվում ոչ միայն եվրոպական հանրային կարծիքի ու մեծ տերությունների, այլև թուրքական իշխանությունների կողմից: Վերջիններիս հրատարակած քարտեզներում, ինչպես նաև գրագրության մեջ բազմիցս օգտագործված «Էրմենիստան», այսինքն՝ «Հայաստան» հասկացությամբ բնորոշվում էր 16-րդ դարում օկուպացված երկրի Հայոց հայրենիքը լինելու անհերքելի իրողությունը:

Այն փաստը, որ Հայաստանում կամ հայաբնակ վայրերում բարենորոգումների ու ռեֆորմների իրականացման խնդիրը 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրից՝ Օսմանյան կայսրության ու ցարական Ռուսաստանի երկկողմ, իսկ Բեռլինի կոնգրեսից՝ համաեվրոպական պարտավորությունների բազմակողմ համակարգի մեջ ներառվելով՝ բարձրացվել էր միջազգային մակարդակի, վկայում էր, որ 1878 թվականից սկիզբ է առել Հայաստանի՝ որպես պետության, և հայության՝ որպես նրանում բնակվող ազգի ճանաչման գործընթացը՝ նոր ժամանակների իրավաքաղաքական հասկացությունների համատեքստում: Բայց դա ոչ թե նոր կազմավորվող պետության և ազգի ճանաչում էր, այլ դեռևս քրիստոնեության ընդունման արշալույսին Հռոմի կայսր Կոստանդիանոս Մեծի ու Հայոց Տրդատ 3-րդ թագավորի դաշնադրությամբ ամրագրված՝ Արևելքի քրիստոնյաների պատվար-պետության վերականգնման սկիզբը:

Ավելին, սկսած 1878 թվականից, Հայկական հարցի լուծման առաջադրանքը ոչ միայն հայ ժողովրդի, այլև միջազգային հանրության օրինական պահանջն էր, իսկ նման իրողության անտեսումը՝ սուլթանական կառավարության ստանձնած միջազգային պարտավորությունների կոպիտ խախտումը:

Պարտավորությունների նմանատիպ համակարգի միջոցով Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների իրավունքների պաշտպանության սկզբունքը դեռևս 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած ռուս-թուրքական պա-



1. THE PROPOSED BOUNDARIES OF "WILSONIAN ARMENIA"

տերազմների արդյունքում, ինչպես նաև՝ Սրբազան դաշինքի 1822թ. Վերոնայի կոնգրեսում և Փարիզի 1856թ. պայմանագրում ամրագրվել էր ժամանակի միջազգային իրավունքի բաղկացուցիչը դարձած՝ Արևելյան հարցի լեգիտիմության իրավական հիմնավորումների և նրա լուծման համար հումանիտար ինտերվենցիայի կիրառման՝ գործնական քաղաքականության տեսքով:

Մասնավորապես, նման հիմնավորումներն ու քաղաքականությունը ժամանակին կիրառվել էր ոչ միայն Բալկաններում՝ Ռուսաստանի, այլև Օսմանյան կայսրության ասիական մասում՝ Ֆրանսիայի կողմից: Այսպես՝ 1860 թ. օգոստոսի 3-ի Փարիզի արձանագրության հիման վրա Լիբանանի քրիստոնյաներին օգնելու միջազգային հանրության պարտավորությունը բնորոշվում էր նույն՝ «հումանիտար» հասկացությամբ[1]: Ուստի՝ նախքան Հայկական հարցի միջազգայնացումը միջազգային իրավունքը Արևելյան հարցի լուծման համատեքստում մշակել ու ամբողջացրել, իսկ հաճախ էլ՝ սուլթանական կառավարությանն էր պարտադրել այն բոլոր հիմնական իրավաքաղաքական նորմերը, որոնք քիչ անց դրվեցին Հայկական հարցի լուծման քաղաքական ուղիների փնտրտուքի հիմքում:

Ավելին՝ այն անհերքելի փաստը, որ Հայկական հարցի միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելուց հետո՝ 1870-ականների վերջերին-1880-ականների սկզբներին, Օսմանյան կայսրությունը հապշտապ կերպով փոխեց իր ռազմակալած (օկուպացրած) Արևմտյան Հայաստանին դարեր շարունակ տրվող «Էրմենիստան», այսինքն՝ «Հայաստան» անվանումը և արգելեց անգամ նրա հիշատակումը՝ տպագիր հրատարակություններում ու եկեղեցական արարողություններում մեջ[2], օրինական (լեգիտիմ) էր դարձնում ոչ միայն Հայկական հարցի լուծման խաղաղդիվանագիտական, այլև հեղափոխական-ապստամբական քայլերը: Քանզի «Էրմենիստանի» գոյության ժխտումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ նրա տիտղոսակիր ազգի գոյության բացասմանն ու ցեղասպանության իրականացմանն ուղղված քայլերի սկզբնավորում: Արդյունքում՝ Սան-Ստեֆանոյից ու Բեռլինից հետո Օսմանյան կայսրության ձեռնարկած հանցավոր գործողությունների մեջ առկա՝ սրանից հետո, ուրեմն՝ սրա պատճառով (post hoc-ergo propter hoc) իրավա-քաղաքական դետերմինիզմը հակասության մեջ էր մտել այդ երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների հետ, որոնք իրավական առումով ավելի բարձր էին, քան նրա տիրակալի ու պաշտոնյաների կամքը:

Այդ պատճառով, հայ ազգային-ազատագրական պայքարը 1878 թվականից հետո արտաքուստ շարունակելով մնալ 19-րդ դարի հեղափոխական շարժումներին բնորոշ «ես ապստամբվում եմ, ուրեմն՝ ես կամ» հեղափոխական փաստարկի շրջագծում, իրականում վերածվում էր սեփական գոյությունը ժխտելու փաստին ցուցաբերվող դիմադրական շարժման՝ զուգոր-

1. Ավելի մանրամասն տե՛ս Ваакн Н. Дадрян, История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, сс. 28-30.

2. Ավելի մանրամասն տե՛ս Էդուարդ Լ. Դանիելյան, Հայաստանն ու հայկական տեղանունները: Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը, «Վէմ» համահայկական հանդես, 2009, թիվ 1:

# ՄԱՆԻՖԵՍՏ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1890 թ.

ՀԱՅԵՐ,

*Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում. Դարերից ի վեր ստրուկ Թիւրքա–Հայաստանը ազատութիւն է պահանջում.*

*Հայոց հարցի վճռի յետաձգելը այլ եւս անկարելի է։ Այսպիսի մի պատմական նշանաւոր միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամեն մի լուրջ հայրենասէրի այդ բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է։*

*Այդ յեղափոխական պայքարի գործադիրն է «Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը», որ այսօրուանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանդ–*

դելով և՛ ազատամարտի, և՛ գոյամարտի բնորոշ գծերը:

Հայտնի է, որ 1878 թ. Բեռլինի կոնգրեսին ողջ արևմտահայության հոգևոր ու քաղաքական առաջնորդ, պատրիարք Ներսես Վարժապետյանի ներկայացրած պահանջները, որոնք տպագրվեցին առանձին գրքույկով («Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի»)[3], կոնկրետացնում էին միջազգային-իրավական առումով ճանաչված՝ Արևմտյան Հայաստանում բարեփոխումների ու ռեֆորմների անհրաժեշտության իմաստն ու բովանդակությունը: Հատկանշական է, որ այս պահանջներն ամփոփող նման համապարփակ փաստաթուղթը կազմվել էր հիմք ընդունելով միջազգային պրակտիկայում առկա նախորդ՝ լիբանանյան նախադեպը, կամ՝ Լիբանանի քրիստոնյաներից տրված Օրգանական ստատուտը, ինչը նշանակում էր, որ նախքան Հայկական հարցի միջազգայնացումը Արևելյան հարցը դադարել էր լինել միայն բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրության խնդիր: Այդ պատճառով, Հայկական հարցի լուծման համար գործադրվող քաղաքական ջանքերը վերածվում էին տվյալ դարաշրջանի միջազգային իրավունքի պաշտպանության փորձերի, իսկ նրանց անտեսումը՝ աստիճանաբար դառնում էր ոչ միայն պետական, այլև միջազգային հանցագործություն:

Արձանագրելով Հայկական հարցի՝ Արևելյան հարցի հետ ունեցած օրգանական կապն ապացուցող այս ելակետային պայմանները, ինչպես ժամանակի, այնպես էլ հետագայի գրեթե բոլոր ուսումնասիրողները անտեսել են այն իրողությունը, որ ի տարբերություն 1880-ականների կեսերից ձևավորված հայ ազգային մյուս կուսակցությունների, 1890-ին հիմնված ՀՅ Դաշնակցությունը իր քաղաքական գործունեության սկիզբը ազդարարեց Բեռլինի կոնգրեսին արևմտահայության հոգևոր ու քաղաքական առաջնորդ, պատրիարք Ներսես Վարժապետյանի ներկայացրած և քիչ անց առանձին գրքույկով տպագրված՝ «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթղթի նոր հրապարակումով: Այն փաստը, որ 1891 թ. մայիսին լույս տեսած ՀՅ Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրօշակի» հենց առաջին համարում տեղ է գտել տվյալ փաստաթղթի համառոտ տարբերակը՝ «**Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան**»[4] վերտառությամբ, ինքնին վկայում է, որ նորաստեղծ կուսակցությունն ի սկզբանե առաջադրում էր միջազգային առումով ճանաչված, լեգիտիմ նպատակներ: Սա ՀՅԴ քաղաքական պայքարի լեգիտիմության հաստատմանն ուղղված կուսակցության առաջին քայլն էր, որը հետագայում ամրագրվեց իրավական ու քաղաքական այլ փաստարկներով:

Հարց է առաջանում. 1890-ին միջազգային իրավունքի տեսանկյունից որքանո՞վ էր օրինական Կ. Պոլսի Հայոց պատրիարքի միջոցով, Բեռլինի կոնգրեսի համար ձևակերպված՝ ողջ արևմտահայության պահանջը: Պատասխանն ակնհայտ է. այն օրինական էր այնքանով, որքանով սուլթանական կառավարությունն՝ ինքը, 1890-ին նախորդած 12 տարիների ընթացքում հրաժարվել էր կատարել Բեռլինի կոնգրեսում իր իսկ ստանձնած չափավոր պարտավորությունները՝ անգամ 1880-ականների սկզբներին իրեն ներկայացված մեծ տերությունների **Համիմաստ** և այլ նոտաներից, այսինքն՝ նման-հիշեցումներից հետո:

Այսպիսով՝ չնայած մեծ տերությունների պահանջներին, 1878-ին սկիզբ առած քաղաքական գործընթացը վերադարձել էր նախքան Բեռլինի կոնգրեսը եղած դրությանը:

Այդ պատճառով, միջազգային իրավունքը ոտնահարող կողմին իր պարտավորությունների կատարմանը մղելու

3. Տե՛ս Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի, Կ. Պոլիս, 1878:
4. Տե՛ս «Դրօշակ», «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» օրգան, թիվ 1, մայիս, 1891, էջ 4-5:

առաջադրանքը, այսինքն՝ Հայկական հարցի լուծման դրոշը, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանից անցնում էր ոչ թե՝ հերթական կուսակցությունը, այլ Հայկական հարցի լուծման համար պայքարող բոլոր ուժերին համախմբելու առաքելությունը ստանձնած Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը, որը դեռևս մինչ այդ՝ 1890 թ. սեպտեմբերին հրապարակված իր Մանիֆեստով ազդարարել էր, որ ինքը «**...ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենտրոնները**»[5]:

Հատկանշական է, որ նորաստեղծ կուսակցության կողմից որդեգրված և 1891 թ. մայիսին «Դրօշակի» առաջին համարում հրապարակված «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթղթի համառոտ տարբերակը՝ «Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան», հիմնված էր Արևմտյան Հայաստանի բավականին համեստ աշխարհագրական սահմանների վրա: Հետագայում միայն՝ 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի և 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի միջոցով ընդլայնվելով՝ դրանք վերածվեցին 6 վիլայեթների պահանջի: Մինչդեռ, 1891 թ. մայիսին հստակեցված՝ ՀՅԴ քաղաքական հիմնանպատակի նախնական աշխարհագրական սահմանները ավելի ուշ՝ 1920թ. օգոստոսի 10-ին, գրեթե նույն համամասնություններով արձանագրվեցին Սևրի դաշնագրում: Քանզի «**Ներսես պատրիարքի նախագիծը Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան**» փաստաթղթով առանձնացված «մեր երկրի» տարածքները փաստորեն միայն Տրապիզոնի նահանգի մի մասով էին տարբերվում Սևրի դաշնագրով ամրագրված սահմաններից: Դրանք էին՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, այսինքն՝ Խարբերդի սանջակի արևելյան մասը, Արգանա (Արղանա) սանջակը և Սղերդի սանջակի հյուսիսային մասը, որոնք կազմում են «**Մեծ Հայաստանի տաճկական մասը**»[6] և նրան գումարած Ռիզե նավահանգիստը՝ Տրապիզոնի ու Բաթումի միջև:



ՀՅԴ Ընդհանուր Ժողով, Կարին, 1914թ.

Այսպիսով՝ ՀՅԴ քաղաքական հիմնանպատակը ի սկզբանե հաստատվել էր Արևմտյան Հայաստանի հայության լեգիտիմ իրավունքների պաշտպանությանն ուղղված այն պարտավորությունների ու նորմերի շրջագծում, որոնք ճանաչվել էին հենց իր՝ սուլթանական կառավարության կողմից: 1890-ին փոխվում էր միայն խնդիրը լուծելու մեթոդաբանությունը, քանի որ մինչ այդ ինքը՝ օսմանյան Թուրքիան էր խախտել միջազգային իրավունքը՝ Հայկական հարցի ձևավորման փաստին պատասխանելով Հայաստանի գոյությունը ժխտելու և անգամ «Հայաստան» բառը պարունակող հրատարակություններն արգելելու քայլերով: Դա է պատճառը, որ 1891թ. սեպտեմբերին լույս տեսած «Դրօշակի» արդեն երկրորդ համարում «Խմբագրութեան կողմից» զետեղվել էր հետևյալ բացատրությունը. «...«**Դրօշակ**»-**ի անցեալ համարում մենք գրել էինք, որ մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյն են, ինչ որ յայտնուած են Ներսէս Պատրիարքի ծրագրում: Որովհետև այդ բառերը տեղիք են տուել թիւրիմացութեան, մենք կարևոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, եթէ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի Տաճկա-Հայաստանում Ներսէս պատրիարքի ծրագրում պահանջուած բարենորոգութիւնները, որ շատ անհաւանական է: Սուլթանը իւր վարմունքով օրէցօր աւելի է համոզում ամենքին, որ Տաճկական-Հա-**

5. Դիւան ՀՅ Դաշնակցութեան, հատ. 1, էջ 88:
6. «Դրօշակ», թիվ 1, մայիս, 1891, էջ 4:



ՀՀ կառավարության շենքը

**յաստանի համար ապըստամբութիւնից դուրս փրկութիւն չկայ**»[7]:

Ուրեմն՝ հեղափոխական գործողությունների դիմելու խնդիրը ՀՅԴ-ի համար ամենևին էլ ինքնանպատակ չէր, այլ հանդիսանում էր հայ ժողովրդի օրինական պահանջների իրականացմանը հասնելու միջոցը: Դա հաստատվում է նաև «Դրօշակի» առաջին համարում մեջբերված՝ Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Կալնոկիի քեավոր դարձած խոսքերով. «**Եւրոպան չկայ, ասաց ներերումս Կալնոկին, և մինչև հայկական հողը չշաղախուի արիւնով՝ թող գիտնան հայերը որ ոչինչ չեն ստանալ**»[8]: Ակնհայտ է, որ «Եւրոպան չկայ» արտահայտությունը տվյալ համատեքստում ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ Հայկական հարցի լուծման ասպարեզում միայն դիվանագիտական մեթոդներով առաջնորդվելու գործելակերպի սնանկության արձանագրում, հենց իր՝ միջազգային դիվանագիտության կողմից, և միաժամանակ՝ հեղափոխական պայքարի դիմելու քարտբլանշ:

Սա էր ՀՅԴ հիմնադրման պահին միջազգային դիվանագիտությունից ստացված այն «քաղաքական ազդանշանը», որը հիմք էր տվել ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակին» իր առաջին համարում չհամաձայնվել նրանց հետ, «**որոնք ուզում են միայն քաղաքագիտութեան (դիպլոմատիայի) միջոցով հասնել իրանց նպատակին, որովհետև բացառապէս դիպլոմատիան ոչինչ չի անիլ դրդուած մարդասիրութիւնից**»[9]:

Այսինքն՝ հիմնվելով արևմտահայության իրավունքների միջազգային-իրավական լեգիտիմության վրա, ՀՅԴ հիմնադիրները հեղափոխական պայքարին անցնելու հետ միասին՝ չէին հերքում նաև Արևելյան հարցի լուծման համատեքստում լայնորեն կիրառված՝ հումանիտար ինտերվենցիայի սկզբունքի արժեքն ու նշանակությունը: Ուրեմն՝ նրանք առաջնորդվում էին քաղաքական պայքարի իմաստի ու նշանակության ավելի լայն՝ համադրական ընկալմամբ, որի արտահայտությունն էր նաև 1892 թվականին ընդունված և 1894 թվականին հրապարակված ՀՅԴ ծրագիրը: Ծրագիրը հիմնավորում էր Արևմտյան Հայաստանի հանդեպ հայ ժողովրդի իրավունքների անժամանցելիության իրավաքաղաքական սկզբունքը՝ Հայոց պատմության անընդհատության, հայ ժողովրդի ու նրա հայրենիքի, այսինքն՝ «մեր երկրի» անբաժանելիության, այն ժամանակավորապես նվաճած «տաճիկների» տիրապետության շարունակման անթույլատրելիության գաղափարների միջոցով. «**Տաճիկները մեր երկրին տիրապետելուց յետոյ ամեն ջանք գործ են դրել մեր ժողովուրդը դարձնել մի կաստա, որի պարտականութիւնը լինի միմիայն աշխատել, արդիւնաբերել, ուրիշ ոչինչ: Հարկաւոր էր այդ ժողովրդին մըշտական հպատակութեան տակ պահել և անարգել կերպով ծծել նրա արիւն-քրտինքով ձեռք բերած աշխատանքը: Հենց դրա համար անհրաժեշտ էր մեռցնել այդ տարրի պատերազմական ոգին, թողնելով նրան աշխատել եզան նման և այդ աշխատանքով կերակրել տիրապետող տարրը: Նրանք բնաջինջ արին մեր ազնուականութիւնը և իրենք բռնեցին նրա տեղը, նրանք խլեցին ժողովրդի ձեռքից սուր, հրացան, ամեն տեսակ պաշտպանութեան զէնքեր և թողին միայն մէկը՝ գութանը**»[10]: Նման հարցադրումը արձանագրում էր, որ հայ ժողովուրդը «մեր երկրի», այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տիտղոսակիր ազգն է, որը նախքան թուրքական բռնազավթումը ունեցել է պետական կեցությանը բնորոշ բոլոր ատրիբուտները, որոնց վերացումը՝ նվաճողների կողմից, խախտել է իրերի բնական դրությունը և կասեցրել է հա-

7. «Դրօշակ», թիվ 2, սեպտեմբեր, 1891, էջ 3:
8. «Դրօշակ», թիվ 1, մայիս, 1891, էջ 1:
9. Նույն տեղում:
10. Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, N 10, օգոստոս, էջ 2:

րազատ երկրի առաջընթացը:

Անցյալի ու ներկայի հակադրության միջոցով ՀՅԴ 1892 թ. ծրագիրը եզրակացնում էր, որ նման իրավիճակը ոչ թե Արևմտյան Հայաստանի ու նրա ժողովրդի բնականոն զարգացման, այլ դրանից շեղվելու հետևանք է, որի արդյունքում ժամանակի ընթացքում առաջ են եկել «**մի կողմից՝ առանձնաշնորհեալ մուսուլման տարրը, միւս կողմից՝ բազմաթիւ քաղաքական իրաւունքներից զրկուած քրիստոնեայ ժողովուրդը**»[11]: Ու քանի որ «**Այդ անհաւասարութեան պաշտպանը, ույժ տուողը ներկայումս տաճիկ կառավարութիւնն է: Պէտք է ուրեմն դէն ձգել այդ կառավարութիւնը, պէտք է ձեռք բերել ազգերի և դաւանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ**»[12]:

Այսպիսով, ՀՅԴ ծրագիրը առաջ քաշելով Արևմտյան Հայաստանի թուրքական նվաճման ծնունդը հանդիսացող բռնատիրական կառավարության տապալման խնդիրը, այն դիտարկում էր իբրև երկրում գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական անհավասարության հաղթահարման համամարդկային առաջադրանքի և ոչ թե՝ դարերի ընթացքում ձևավորված տարբեր ազգերի զուգահեռ գոյակցության սկզբունքի հաղթահարման միջոց: Ընդհակառակը, ՀՅԴ-ն իր 1892 թ. ծրագրում առաջադրում էր վերջիններիս համատեղ գոյակցության համար անհրաժեշտ՝ ազգերի ու դավանանքների իրավահավասարության եվրոպական սկզբունքը:

Ուստի՝ ՀՅԴ ծրագիրը սահմանում էր, որ կուսակցության նպատակն է կռվել նաև «**...այն ընդհանուր պայմանների դէմ, որոնցից նեղուած են միաժամանակ հայ և օտար տարրը՝ ասորիները, եզդիները, քրդերի մի մասը և խաղաղ տաճիկները և այլն**»[13]:

Այսպիսով՝ ՀՅԴ հիմնադիրները առաջադրում ու հիմնավորում էին ոչ թե այլ ազգերի ու ժողովուրդների դեմ պայքարի խնդիրը (ինչը երբեմն՝ սխալմամբ, երբեմն՝ միտումնավոր կերպով, վերագրվել է նրանց), այլ հալածանքների, կրոնափոխության ու շահագործման պետական քաղաքականության գործիքի վերածված թուրքական խուժանի ու քրդական աշիրեթների ջարդարարական նկրտումների զսպման անհրաժեշտությունը:

Նման պետա-քաղաքական իդեալը հստակորեն միմյանցից սահմանազատում էր Օսմանյան կայսրության տիրակալի և նրանում բնակվող ժողովուրդների իրավունքները, քանզի կայսրության այս կամ այն մասի հանդեպ առաջինի տիրապետության սահմանափակման միջազգային-քաղաքական առաջադրանքը (բարենորոգումներ, ինքնավարություն և այլն) ՀՅԴ-ն դիտարկում էր որպես նրանում բնակվող բոլոր ժողովուրդների իրավունքների ապահովման միջոց: Այդպիսով՝ Օսմանյան կայսրության միջազգային պարտավորության կատարման պահանջը զուգորդելով Ֆրանսիական Մեծ հեղափոխության կողմից սրբագործված և 20-րդ դարի միջազգային իրավունքի անկյունաքարը դարձած՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների համամարդկային սկզբունքների հետ, ՀՅԴ-ն իր քաղաքական հիմնանպատակի լեգիտիմությունը փաստարկում էր միանգամից երկու իրավական հիմնավորումներով:

Արդյունքում՝ իր ձևավորման պահից, ՀՅ Դաշնակցությունը կարողացավ Հայկական հարցը համադրել այն համամարդկային իդեալների հետ, որոնք դարձան 20-րդ դարի միջազգային իրավունքի անկյունաքարերը: Այս երկուսի հանրագումարն էր «ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալը: Նրա ազգային ու միաժամանակ՝ համամարդկային էությունը կուսակցության հիմնադիրների կողմից բանաձևվել է ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակի» հենց առաջին համարում. «**Մեր կռիւը Տաճկաց կառավարութեան դէմ ոչ միայն ազգային կռիւ է, այլև եւրոպական քաղաքակրթութեան և մարդկային իրաւունքների կռիւ՝ յօգուտ ամբողջ մարդկութեան և կուլտուրայի**»[14]: Մեր օրերում ևս իրենց արդիականությունը պահպանող այս մի քանի տողերի մեջ խտացած է Հայոց պատմության՝ հազարամյակների փիլիսոփայությունը:

Ավելին՝ ընդհուպ մինչև Մեծ եղեռնը և Հայաստանի Հանրապետության ձևավորումը, «ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալը որպես քաղաքական առաջադրանք, կուսակցության ո՛չ 1892 թ. և ո՛չ էլ 1907 թ. ծրագրերում երբեք չանցավ Արևմտյան Հայաստանի ինքնավարության ձեռք բերման չափավոր պահանջի սահմանագծից անդին: Անգամ Հայկական բարենորոգումների խնդիրը հիմնավորելու համար Առաջին աշխարհամարտի նախօրեին մեծ տերություններին ՀՅԴ-ի կողմից ներկայացված նախագծում ՀՅԴ պաշտոնական պահանջները ինքնավարությունից այն կողմ չէին անցնում:

Իսկ Հայոց ցեղասպանությունից և Հայաստանի Առաջին Հանրապետության ձևավորումից հետո՝ 1919 թվականին, ՀՅԴ-ի կողմից առաջադրված Միացյալ և Անկախ, քիչ անց՝ Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստան քաղաքական պահանջի լեգիտիմու-

11. Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, N 10, օգոստոս, էջ 2:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, 1894 թ., սեպտեմբեր, N 11, էջ 3:
14. «Դրօշակ», 1891, N 1, էջ 4:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

թյունը հաստատվեց անմիջապես՝ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներում և իր գործադրման առաջին հանգրվանը տեղափոխվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռի միջոցով, որոնք իրենց իրավական ուժը պահպանել են ընդհուպ մինչև մեր օրերը:

Այսպիսով՝

ա) Արևմտյան Հայաստանի ազատագրության, հայ ժողովրդի ինքնորոշման ու Հայոց պետականության վերականգնման խնդրի՝ Հայկական հարցի միջազգայնացման գործի նախաձեռնողը 16-րդ դարում Օսմանյան կայսրության կողմից օկուպացված Արևմտյան Հայաստանի հայության օրինական ներկայացուցիչ՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանն էր, որն իր կազմած «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթղթի հիմնավորումները կառուցել էր Հայկական հարցին անմիջականորեն նախորդած՝ լիբանանյան նախադեպի վրա: Ուստի՝ 120 տարի առաջ՝ 1890 թվականին հրապարակված իր Մանիֆեստում արձանագրելով, որ Հայկական հարցն առաջադրել է «**ինքը՝ ժողովուրդը**»[15], ՀՅ Դաշնակցությունը ստանձնել է այդ միջազգայնորեն ճանաչված, լեգիտիմ հիմնահարցի լուծման առաջադրանքը,

բ) 1878 թվականից սկսած՝ Օսմանյան կայսրության միջազգային պարտավորությունների համակարգի բաղկացուցիչը դարձած Հայկական հարցը տվյալ դարաշրջանի միջազգային իրավունքի անկապտելի մասն էր, որի անտեսումը և «Հայաստան» տեղանվան գործածության արգելումը՝ սուլթանական կառավարության կողմից, ոչ միայն պետական, այլև միջազգային հանցագործություն էր:

գ) Հայկական հարցի լուծման համար ՀՅԴ քաղաքական պայքարը հիմնվում էր ինչպես միջազգային դաշնագրերով ամրագրված՝ բարեփոխումների պահանջի, այնպես էլ 20-րդ դարի միջազգային հարաբերությունների անկյունաքարը դարձած՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազգերի ու դավանանքների իրավահավասարության՝ օրինական նըպատակների վրա,

դ) ի տարբերություն սուլթանական կառավարության գործը ժառանգած Թուրքիայի իթթիհատական ու քեմալական ղեկավարների ցեղասպանական նկըրտումների, ՀՅԴ-ն ի սկզբանե ճանաչել է Արևմտյան Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների իրավունքները և պայքարել է ոչ թե նրանց ֆիզիկական բնաջնջման, այլ առավելագույնը՝ պետականորեն հրահանգավորվող հալածանքների, կրոնափոխության ու շահագործման գործիքի վերածված թուրքական խուժանի ու քրդական աշիրեթների ջարդարարական նկրտումների զսպման համար,

ե) ընդհուպ մինչև Մեծ եղեռնը և Հայաստանի Հանրապետության ձևավորումը «ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալի կոնկրետ-քաղաքական կերպավորումները ո՛չ 1892 և ո՛չ էլ 1907 թվականների ծրագրերում երբեք չեն հատել Արևմտյան Հայաստանի ինքնավարության ձեռք բերման չափավոր պահանջի սահմանագիծը, ուստի՝ 1915-ին տեսականորեն անգամ չէին կարող դառնալ «փաստարկ», այսպես կոչված՝ «վտանգված մեծամասնության» պաշտպանության կեղծ կարգախոսով հանդես եկող թուրք ցեղասպանների համար,

զ) ՀՅԴ Մանիֆեստում, 1892 և 1907 թթ. ծրագրերում, Միացյալ և Անկախ Հայաստանի մասին 1919 թ. պետական ակտում ամրագրված ՀՅ Դաշնակցության քաղաքական հիմնանպատակը դառնալով Սևրի դաշնագրի ու Վ. Վիլսոնի իրավարար վճռի հիմնաքարը, իր միջազգայնաիրավական լեգիտիմությունը պահպանում է նաև մեր օրերում:

**Եզրակացություն.** Թուրքական պատմագրության, արևմտյան որոշ հետազոտողների և խորհրդային բեռը դեռևս չհաղթահարած, իսկ վերջին շրջանում՝ «ցեղային դիտանկյունով» առաջնորդվող առանձին հայ հեղինակների կողմից ՀՅԴ պատմությունը 19-րդ դարի միջազգային իրավունքի նորմերի և ազատության ու ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների անհաշտ հակասության (կոլիզիայի) համատեքստում դիտարկելու ձևով՝ հակադիր, բովանդակությամբ՝ նույնական փորձերը, անտեսում են այն իրողությունը, որ իր հիմնադրման պահից սկսած՝ ՀՅԴ-ն առաջադրել է լեգիտիմ քաղաքական նպատակներ: Ավելին՝ նոր և նորագույն ժամանակներում հայ ժողովրդի ազգային ու համամարդկային նպատակները համադրած միակ կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության գաղափարախոսությունը մեթոդաբանական առումով հայ իրականության մեջ այսօր էլ չունի իր այլընտրանքը՝ ազատականության աշխարհաքաղաքացիական հովերին և կեղծ-ազգայնական-ցեղապաշտական փորձարարություններին հանդիման, քանի որ այսօր էլ այն միակ գաղափարախոսությունն է, որ շարունակում է հիմնվել հայկական քաղաքակրթությանը բընորոշ՝ ազգային ձևի և համամարդկային բովանդակության ներդաշնակ համադրության վրա[16]:

15. Դիւան ՀՅ Դաշնակցութեան, հտ. 1, էջ 88-89:
16. Այս նյութը հեղինակի ելույթն է ՀՅԴ 120-ամյակի առիթով Հայ Դատի հիմնադրամի Երևանում կազմակերպած գիտաժողովում:

ԴՐՕՇԱԿ
Խորհրդածողով

# ԴԵՄՈԿՐԱՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Արա Նռանյան*

Ժողովրդավարության թեման շատ հարուստ է և մեծ: Կառավարման այդ համակարգին նվիրված են անթիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ, այդ խնդրով են զբաղվում ամբողջ աշխարհում գործող բազմաթիվ պետական և ոչ պետական կառույցներ: Մշակվել, փորձարկվել կամ այդպես էլ թղթի վրա են մնացել մի շարք տեսական և գաղափարական մոտեցումներ: Հաշվի առնելով խնդրի ծավալները, ցանկանում եմ կենտրոնանալ իմ կողմից առանձնացվող հետևյալ խնդրի վրա. խոսքը ազգի և պետության կառավարման անկյունաքարը հանդիսացող՝ ժողովրդի կողմից պետության ղեկավարության, իշխանության ընտրության խնդիրն է: Այսպես կոչված՝ «լավագույնի ընտրության» հիմնախնդիրը մեր հասարակությունում:

**Ժողովրդավարացման քաղաքական և տնտեսական սահմանափակումները Հայաստանում**

Ժողովրդավարության կարևորագույն չափորոշիչներից է ժողովրդի, հասարակության հնարավորությունը ընտրել իշխանություն՝ որոշակի հիմնախնդիրներ լուծելու համար, և այդ իշխանությունը փոխելու կարողությունը, եթե առկա է ցանկություն փոխարինել իշխող վերնախավին նորով, որն ավելի լավ կարող է արտահայտել հասարակության տվյալ պահի պատկերացումները երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային զարգացման վերաբերյալ:

Ի՞նչն է պատճառը, որ որոշ երկրներում կայացան հզոր դեմոկրատական ինստիտուտներ, իսկ այլ տեղերում ակնհայտ է դեմոկրատիայի ճգնաժամը և նույնիսկ ձախողումը:



Արա Նռանյան

Կարիք չեմ տեսնում քննարկել Հայաստանի պարագայում մշակութային սահմանափակումների խնդիրը: Հայաստանը որպես քրիստոնեական մշակույթի վրա հիմնված երկիր, չունի և չի կարող ունենալ որևէ հոգեբանական էական խոչընդոտ դեմոկրատացման ճանապարհին: Եթե հիմք ընդու-




Սեյմուր Լիփսեթ

ենք նույնիսկ ամենածայրահեղ մոտեցումը, համաձայն որի միայն արևմտյան քաղաքակրթությունը կարող է լիովին լինել դեմոկրատական, ապա պետք է հիշենք, որ ժամանակին կաթոլիցիզմի՝ որպես ժողովրդավարության խոչընդոտի վերաբերյալ առաջ քաշվող նման թեզերը ապացուցեցին իրենց ոչ կենսունակությունը: Հայաստանը, ի տարբերություն այլ երկրների, մշակութային, կրոնական, ավանդապաշտական խոչընդոտների որևէ էական պրոբլեմ չունի:

Այլ է խնդիրը տնտեսական հիմնախնդրի մասով: 1950-ականներին Ս. Լիփսեթի կողմից ներկայացված վարկածի համաձայն միայն տնտեսապես զարգացած հասարակությունը կարող է գնալ դեպի դեմոկրատիա (որոշ չափով «արդիականացման» տեսությունը, ըստ էության, արդարացնում է Բիսմարկի և Ստալինի իշխանությունները): Դեմոկրատացման գործընթացներ հաջողությամբ ընթացել են հիմնականում միջինից բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում: Այստեղից, օրինակ, Ս. Հանթինգթոնը եզրակացնում է, որ աղքատությունը դեմոկրատիայի ամենամեծ խոչընդոտներից է: Կարելի է ենթադրել, որ դրանով է պայմանավորված միջազգային հաստատությունների հետևողական աշխատանքը Հայաստանում աղքատության նվազեցման ուղղությամբ:

Այսօր նույնպես որոշ արևմտյան մասնագետներ հանգում են եզրակացության, որ դեմոկրատիայի ապագան պայմանավորված է տնտեսական զարգացմամբ: Սակայն կարելի է կատարել և հակառակ պնդումը՝ **ավտորիտար իշխանության պահպանումը պահանջում է աղքատության առկայություն հասարակությունում:** Կարելի է կատարել նաև հետևյալ հաստատումը՝ աշխարհում դեռևս չկան ոչ դեմոկրատական հասարակություններ, որտեղ քաղաքացիների կենսամակարդակը հասել է Եվրոպայի, ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի ցուցանիշներին՝ առանց դեմոկրատական տեղաշարժերի:

Արևմուտքում ընդունելի է, որ ժողովրդավարությանը զուգահեռ, այնուամենայնիվ, տնտեսական կյանքում չի կարող լինել ամբողջական ազատականացում: Հարց կուղղեմ այդ տեսակետը պաշտպանողներին՝ արդյո՞ք Հայաստանի և այլ նեոլիբերալ, գերազատական (ըստ էության, վերջում՝ հակաշուկայական դարձող) տնտեսավարումը չի հանդիսանում խոչընդոտ դեմոկրատիայի համար: Միջազգային նեոլիբերալ հաստատությունների խորհուրդներով առաջնորդվող երկրները այդպես էլ չդարձան դեմոկրատական, իսկ եթե դարձան, ապա բոլորովին այլ պատճառներով:

Եզրակացություն. նեոլիբերալիզմը և կարծես թե ազատականություն տարածող միջազգային ֆինանսական կառույցները վերջում, կամա թե ակամա, դառնում են ավտորիտարիզմի պաշտպանը, որովհետև նման քաղաքականություն կարող է իրականացվել միայն ոչ դեմոկրատական ու ոչ զարգացած հասարակություններում: Հիշենք Չիլիի և Լատինական Ամերիկայի այլ երկրների, ասիական որոշ պետությունների, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և իհարկե՝ Հայաստանի օրինակը:

Դեմոկրատիան, ըստ Ռոբերտ Դալի, կարիք չունի առատության, ոչ էլ նյութական բացարձակ բարեկեցության: Այն պահանջում է համեմատական բարեկեցու-



Սեմյուել Հանթինգթոն

թյուն, հավատ արդարության և հաջողության հնարավորության նկատմամբ:

Այդ դեպքում, ինչո՞ւ է Հայաստանում հայրենասիրությունը, նվիրվածությունը երկրին, պետությանը փոխարինվում նյութականի պաշտամունքով: Հակադրվելով ազգայինին պարզապես նյութականացվում և բարոյազրկվում է հասարակությունը, որն այլևս չի կարող ապահովել դեմոկրատացում:

Եվ ամենակարևոր խնդիրը քաղաքականն է: Այսպես կոչված նոր դեմոկրատիայի երկրների ժողովուրդները չունեին դեմոկրատիայի փորձը: Լուրջ խոչընդոտ էր նոր վերնախավի թույլ ընդգծված կամ նույնիսկ բացակայող իրական հակումը դեպի ժողովրդավարություն: Իշխանության գլխին չգտնվելով, քաղաքական գործիչները ունեն դեմոկրատիայից խոսելու սեփական պատճառներն ու շահերը: Նրանց դեմոկրատական հայացքները և համոզումները փորձություն են անցնում իշխանություն ստանալուց հետո: Սակայն գալով դեմոկրատական ճանապարհով իշխանության, այդ գործիչները փաստացի հրաժարվում են ժողովրդավարությունից: Դրա վառ օրինակներից են հետխորհրդային երկրները՝ Ռուսաստանը, Ղրղզստանը, Վրաստանը, Ադրբեջանը և իհարկե՝ Հայաստանը: 1990-ականների «դեմոկրատ» առաջնորդները հաստատեցին ավտորիտար ռեժիմներ և արժանացան հասարակության լուրջ դիմադրության:

### Ֆեոդալ էլիտարացումից դեպի ազգային էլիտայի ընտրության համակարգի ստեղծում

«Նոր դեմոկրատիաների» առանձնահատկությունը կձևակերպեի «ուժեղ իշխանություն-թույլ պետություն» սխեմայով: Իշխանություններն այնքան ուժեղ են, որ կարող են անել ամեն ինչ իրենց երկրի ներսում և ըստ էության ապահովել իրենց մշտական վերարտադրությունը: Սակայն քաղաքական մրցունակության բացակայության պայմաններում այդպիսի «դեմոկրատիայով» չի ընտրվում լավագույնը: Կաղում է պետական կառավարման արդյունավետությունը, փաստացի չի գործում պետական կառավարման բուրգը, իսպառ չի գործում որոշումների կայացման որևէ համակարգված մեխանիզմ:

Այլ պատկեր ունենք Արևմուտքում: Գործում է «թույլ իշխանություն-ուժեղ պետություն» մոդելը: Իշխանությունն այնքան հզոր չէ, որ երաշխավորված նստի պետական բուրգի վերևում: Իշխող քաղաքական ուժը փորձում է մշտապես հաղորդ լինել հասարակության և ընդդիմության կողմից բարձրացվող խնդիրներին, տալ դրանց լուծումները: Այդպիսի, հայկական «վերնախավի» տեսանկյունից «թույլ իշխանությունը» ղեկավարում է քաղաքական մրցակցության շնորհիվ արագ զարգացող հարուստ և հզոր պետությունը:

Այս վիճակի պատճառները հասկանալու համար պետք է մի փոքր պատմության մեջ ետ գնանք: Արևմտյան ժողովրդավարությունների արդյունքը ազգային հեղափոխություններն էին, որոնք տեղի ունեցան ավելի քան երկու հարյուրամյակ առաջ: Եթե նախկինում ֆեոդալական վերնախավի ընտրությունն, ըստ էության, նախօրոք կայացված էր կամ դրա ընտրության իրավունքը պատկանում էր միապետին, իսկ փոփոխությունները հազվադեպ էին տեղի ունենում, ապա նոր դասակարգի ցանկությունը՝ հայտնվել վերնախավում, պահանջում էր ընտրության մեխանիզմի առկայություն: Իսկ քանի որ աչքի առաջ էր հին վերնախավով պայմանավորված որոշակի



Ռոբերտ Դալ

արժեհամակարգ, ապա գնահատականն ու չափորոշիչները պետք է առնվազն բարարարեին նախկին էլիտայի նվազագույն պահանջներին և նույնիսկ գերազանցեին դրանք: Կարելի է ասել, որ տեղի ունեցավ «ապաէլիտարացում», կամ, որն ավելի ճիշտ է, էլիտայի ձևավորման համընդհանուր համակարգի ձևավորում, որից կարող էր այսուհետ օգտվել հասարակության յուրաքանչյուր մարդ՝ բավարարելով որոշակի պահանջներ:

Հայաստանը չուներ էլիտա. ոչ քաղաքական, ոչ տնտեսական: Պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի մեջ ձևավորված էին ազգային մարդուն, ազգի նվիրյալին համապատասխանող բազմաթիվ հզոր կերպարներ, սակայն չկային իշխող վերնախավի, պետության վերնախավի ձևավորված պատկերացումներ: Առավել ևս՝ վերջինիս ընտրության պատկերացումներ: Հայաստանում տեղի չի ունեցել ապաէլիտարացում, հակառակը՝ Հայաստանում տեղի ունեցավ նոր վերնախավի ձևավորում, ինչը համապատասխան ընտրության ավանդույթների և պատկերացումների բացակայության պայմաններում տարավ երկիրը հակառակ ուղղությամբ:

Եթե Անգլիայի, Ֆրանսիայի կամ Հոլանդիայի հեղափոխությունները հիմք դրեցին ազգային պետության կառուցմանը, որտեղ էլիտայի շտեմարանը ամբողջ ազգն է, ապա Հայաստանում տեղի ունեցավ էլիտարացման, ֆեոդալացման գործընթաց: Արդյունքում, ձևավորվել է դասական ֆեոդալական համակարգ, որտեղ երկրի իշխող վերնախավին ավելի հարազատ են օտարերկրյա իրենց գործընկերները, բայց ոչ իր հասարակության ներկայացուցիչները կամ ընդդիմախոսները:

### Ո՞րն են լուծումները

Թ. Կարլն ու Ֆ. Շմիթտերը առանձնացնում են հետևյալ չորս ուղիները ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն. վերնախավի տարբեր խմբավորումների փոխհամաձայնություն, իշխող վերնախավի կողմից բարեփոխումների միակողմանի պարտադրանք՝ անմիջապես իշխանություն ունեցող անձանց առկա դիմադրությունը կոտրելու նպատակով, հասարակական լայն զանգվածների կողմից պարտադրվող որոշ չափով փոխզիջումային բարեփոխումներ՝ առանց բռնության, հեղափոխություն՝ զինված ապստամբության միջոցով գործող ավտորիտար վարչակարգի տապալում:

Ամերիկացի քաղաքագետները առավել ողջունելին համարում են առաջին տարբերակը: Համաձայնվելով իրենց հետ՝ միաժամանակ կատարենք հետևյալ հարցադրումը՝ արդյո՞ք Հայաստանում դա հնարավոր է: Ըստ օտարերկրյա մասնագետների, երբ ենթադրվում են քաղաքացիական իրավունքներն ու լայն զանգվածների ազատությունները, երբ տարբեր խմբերի իրավունքները պաշտպանվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից, պետությունը կրում է պատասխանատվություն շուկայի կարգավորման և եկամուտների վերաբաշխման, իսկ տնտեսությունը ինտեգրված է միջազգային շուկաներին, ապա նման «պայմանագիրը» հնարավոր է: Ինչպես տեսնում եք, գոյություն չունեն նման փոխհամաձայնության նախադրյալներ: Այլ կերպ ասած՝ Հայաստանի վերնախավը սկզբունքորեն դիտարկում է վերը նշված հարաբերությունները բոլորովին այլ հարթության վրա:

Չեմ տեսնում առայժմ նաև երկրորդ տարբերակը,



Ֆիլիպ Շմիթտեր

քանի որ վերնախավի միակողմանի պարտադրանքը որոշ չափով ենթադրում է նաև ինքնաոչնչացում: Չէ՞ որ Հայաստանի դեմոկրատացման հիմնական խոչընդոտը հենց ներկայիս համակարգն է՝ իր բոլոր դրսևորումներով:

Բարեփոխումների հասարակական պարտադրանքի համար թույլ են զարգացած հասարակական ինստիտուտները, իսկ փոքր պետության պայմաններում իշխող ուժի համար շատ ավելի հեշտ է վերահսկելի և կառավարելի դարձնել գործընթացները:

Չորրորդ՝ ուժային տարբերակը շատերը կարող են դիտել ոչ ժողովրդավարական, սակայն նման տեսանկյունից դիտարկումը սխալ է, քանի որ ժողովրդավարական ինստիտուտների անգործության կամ փաստացի բացակայության պայմաններում ժողովրդական և ժողովրդավարական հեղափոխությունը չի կարող դիտվել հակադեմոկրատական: Այս ուղու հիմնական թերությունը տեսնում եմ իշխանության եկող նոր վերնախավի ձևավորման մեջ: Հասարակություն, որը չունի պրոգրեսիվ իշխող վերնախավ կամ վերնախավեր, չունի բարեփոխումներ և առաջընթաց պարտադրող հզոր հասարակական ինստիտուտներ, չի կարող ունենալ երաշխիքներ, որ հեղափոխական ճանապարհով փոփոխությունը բերելու է ժողովրդավարություն: Վկա՝ թե մեր 20 տարվա պատմությունը, թե այլ նորանկախ պետությունների օրինակը, ինչի մասին արդեն նշել ենք:

Որոշ մասնագետներ նշում են, որ բռնությունից հրաժարումը և առանց ուժի կիրառման իշխանության փոփոխությունը հանդիսանում են դեմոկրատիայի հիմքերից մեկը: Հարց. նույնիսկ ոչ դեմոկրատական վարչակարգերի դեմ պայքարելի՞ս:

**Ավտորիտար իշխանությունից դեպի ժողովրդավարական հասարակություն ընկած ճանապարհը պահանջում է նախ և առաջ նոր սերնդի ձևավորում, որը կարող է դառնալ բոլորովին այլ արժեքային համակարգով ապրող նոր վերնախավի հիմքը: Այնպիսի վերնախավի, որը պատրաստ կլինի գնալ զոհողությունների, որը կգիտակցի իր առաքելությունը ազգի և ապագա սերունդների առջև:**

Որպեսզի ճիշտ հասկացվեմ, միանգամից նշեմ, որ խոսքը չի գնում Կոնֆուցիուսի կողմից խոսվող բարոյական և պրոֆեսիոնալ փոքրամասնության մասին, որը միշտ լավ գիտի, թե հասարակությանը ինչ է պետք:

Հիշատակելով լորդ Ջ. Աքթոնի խոսքերը, որ «իշխանությունը այլասերում է, իսկ բացարձակ իշխանությունն այլասերում է բացարձակապես», համոզում եմ հայտնում, որ իշխանությունը պետք է փոխվի: Միշտ: Հա-

կառակ պարագայում ամենալավ դեմոկրատը կունենա շանս դառնալ աշխարհի ամենադաժան բռնապետը:

**Վարկանիշներ և գնահատականներ. օգու՞տ, թե՞ վնաս**

Վերջում ուզում եմ անդրադառնալ ժողովրդավարության գնահատման չափանիշներին, որոնք կիրառում են բազմաթիվ միջազգային կառույցներ: Ի՞նչ են առաջարկում մեզ այդ կառույցները: Ասվում է, որ ամեն ինչ հարաբերական է, ինչի հետ դժվար է վիճել: Սակայն այստեղ առկա է նաև լուրջ վտանգ, որը տեսնում ենք «մասամբ» բառը կրող խմբի մեջ մտնող երկրների դեպքում: Լինեն դրանք տնտեսական զարգացման աստիճանի, կոռումպացվածության կամ ժողովրդավարացման վարկանիշներ, հարկավոր է դրանց վերաբերվել շատ զգույշ հետևյալ պատճառով: Դրանց մեթոդաբանությունը լուրջ բանավիճելու առիթ է, իսկ **դրանց կիրառումը փաստացի պաշտպանում և հովանավորում է երկրներում առկա վատ բարքերը**: Ճգնաժամն արդեն ապացուցեց տնտեսական ոլորտի վարկանիշների բացասական ազդեցությունը և վիճարկելի լինելու հանգամանքը: Ժամանակն է անդրադառնալ այլ վարկանիշներին: Երբ կոռումպացվածության մակարդակի աղյուսակում մի երկիր մյուսից մի քանի տողով տարբերվում է, ապա դա բոլորովին չի կարող նշանակել դրանցից մեկում վիճակն ավելի լավ լինելու մասին: Իսկ մի քանի տասնյակ երկրների ցանկի խորքում տեղաշարժը չի կարող ապացուցել վիճակի լավացման կամ վատացման մասին: Դեմոկրատացման կամ հասարակական ինստիտուտների զարգացածության մակարդակը բնութագրող վարկանիշները պարզապես արդարացնում են ոչ դեմոկրատական ռեժիմների գոյությունը և լեգիտիմացնում դրանք:

Հասկանալի է, որ չկա «բացարձակ դեմոկրատիա» հասկացություն, բայց նաև չի կարող համարվել դեմոկրատական՝ փաստացի այդպիսին չհանդիսացող պետությունը: Եկեք ընդունենք, որ արդյունքում հենց նման միջազգային վարկանիշներն են փաստացի լեգիտիմացնում ժողովրդավարական չհանդիսացող նույնիսկ այնպիսի վարչակարգեր, ինչպիսիք առկա են Ադրբեջանում կամ Ղազախստանում:

Իսկ գուցե իսկապես՝ դեմոկրատիա կամ կա, կամ չկա՞: Պարզ է, որ երկրի ժողովրդավարական համակարգը ստեղծելու արդյունքում կարող ես ունենալ սեփական որոշ առանձնահատկություն, սակայն հենց սկզբից առանձնահատկությունները առաջ մղելով, **ավտորիտար վարչակարգերը պարզապես տեղական առանձնահատկությունների անվան տակ խուսափում են ժողովրդավարական բարեփոխումներից:**



Թերրի Կարլ

Ժամանակն է նաև անկեղծորեն ասել, որ **«մասամբ ժողովրդավարական» երկրների նպատակը ոչ թե ժողովրդավարության հաստատումն է, այլ զարգացած ժողովրդավարական երկրների բարիքներից, ընդ որում՝ նյութական բարիքներից, օգտվելը**: Եվ եթե դա Արևմուտքի համար ընդունելի է կամ երկկողմանի շահավետ, ապա...

Վերջում կրկնեմ. իշխանությունը պետք է միշտ փոխվի, հակառակ դեպքում ցանկացած դեմոկրատ կարող է դառնալ աշխարհի ամենադաժան բռնապետը:

# ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Արսեն Պետրոսյան
«Տնտեսական անվտանգության
աջակցության նախաձեռնություն»
հիմնադրամի տնօրեն

Խոսելու համար տնտեսության արդիականացման, դրա անհրաժեշտության կամ նպատակների մասին պետք է նախ գոնե համառոտ փաստել, թե ինչ ունենք մենք այսօր տնտեսության բնագավառում: Ի՞նչ է իրենից ներկայացնում Հայաստանի տընտեսությունը:

Ակնհայտ ներմուծման կողմնորոշում ունեցող, տնտեսության իրական հատվածի ստորադասում ֆինանսականի նկատմամբ, տնտեսության և սոցիալական իրավիճակի համար գերբարձր նշանա-





կություն, արտաքին տրանսֆերտային կախվածություն, բնակչության եկամուտների գերբևեռայնացվածություն, աղքատության մեծ տեսակարար կշիռ, մրցակցության և բիզնես միջավայրի ոչ բարձր մակարդակ, տնտեսության, արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի, իրականացվող քաղաքականությունների ու իրական սպառնալիքների անհամապատասխանություն, տնտեսության բնագավառում ծրագրվող ցուցանիշների ու նպատակների անհետևողականություն, անտրամաբանություն, բյուջետային գործընթացների մեկուսացվածություն տնտեսական քաղաքականությունից ու խնդիրներից:

Սակայն տնտեսության ոլորտում ներկա իրավիճակի բերած նախադրյալներն ու հանգամանքները, ինչպես կտեսնենք ստորև, շատ դեպքերում բուն տնտեսական չեն, այլ առնչվում են ազգային արժեհոգեբանական համակարգին:

**Նախաբան**

Ազգային տնտեսություն ասելով նկատի չի առնվում տնտեսության ոլորտների կամ առանձին ձեռնարկությունների ազգայնացումը, պետական միջամտության ինքնանպատակ ավելացումը, առավել ևս միջազգային տնտեսական հարաբերություններից մեկուսացումը: Ազգային տնտեսությունը ազգային դիմագիծ, որոշակի տրամաբանություն, հեռահար նպատակներ ու կառուցվածք ունեցող տնտեսություն է: Տնտեսական քաղաքականությունը, արդյունքում՝ նաև տնտեսությունն ու տնտեսական կառուցվածքը, չլինելով ստատիկ, պետք է ունենան տրամաբանված որոշակի զարգացման վեկտոր:

Ազգային տնտեսության արդիականացում ասելով այսօր առաջին հերթին պետք է հասկանալ ազգային անվտանգության առաջնային սպառնալիքները հաշվի առնող և իրականացվող գործընթաց: Այս նախաձեռնության մեկնարկը նշանակում է **ժողովրդագրական ու միգրացիոն միտումների կտրուկ բեկում:** Չի կարելի ակնկալել տնտեսության իրական աճ, եթե տվյալ երկրի բնակչության թվաքանակը չի աճում ու սոցիալ-տնտեսական կյանք չեն ներմուծվում բավարար նախադրյալներ կամ խթաններ այդ աճի ապահովման համար:



**Ա. Տնտեսության արժեքները**

Մեր դեպքում վստահաբար կարելի է նշել, որ տնտեսության արդիականացում նշանակում է ազգային արժեքների, այդ թվում դասականների գաղափարների ու պատմական առաջնորդների հորդորների վերհիշում-թարմացում, այլ ոչ թե անտեսում. երբ ինքներս մեզ կբացահայտենք-կզարմացնենք, թե որքան են դրանք արդիական՝ համապատասխանելով ժամանակակից եվրոպական արժեքներին ու մարդու իրավունքների այսօրվա չափանիշներին: Վերընթերցելով Գ. Նժդեհին կհասկանանք, որ տնտեսության կյանքում նույնքան կարևոր է «ատամով» լինելը, որքան ռազմի գործում, իսկ Թումանյանից կհիշենք, որ պետական կառավարման համակարգում նույնքան կարևոր են անկեղծ հայրենասիրությունը, որքան դպրոցում ու հասարակական կյանքում: Այո, մենք ունենք արդիականացման խնդիր, քանզի Թումանյանի ու Նժդեհի առաջ քաշած հայրենիքի տեսլականը դեռևս մնում է չիրագործված, ու նաև դրանով են արդիական ազգին այդքան լավ ճանաչող նվիրյալները: Տնտեսության արդիականացում նշանակում է այս արժեքների ու ժառան-գության վերհիշում ու տնտեսության կառուցման ճանապարհին, ինչպես նաև կառավարման սկզբունքներում (մոտեցումներում) տեղայնացում:

Նյութապաշտություն ու անբարոյականության նկատմամբ անտարբերություն, կոռուպցիա, առաքինությունն ու բարոյականը նիրհի մեջ... Սրանք ընդհանուր առմամբ ներկայիս աշխարհին բնորոշ երևույթներ են: Սակայն, եթե մենք նպատակ ունենք աշխարհի տնտեսությունների մեջ բնական ռեսուրսների վրա հիմնըված տնտեսությունից հիմնովին անցում ապահովել դեպի արդյունավետության, իսկ այնուհետև ինովացիայի վրա հիմնըված տնտեսություն, ապա պետք է այլ ձևով ներկայանանք աշխարհին ու այլ խոսք ասենք: Սրան հնարավոր է հասնել ազգային դիմագծի վերանայման ճանապարհով: Ճշտապահությունը, աշխատասիրությունն ու համախմբվածությունը մեր ազգային մշակութային ժառանգության հիմքի վրա կհանդիսանան այն վճռորոշ գործոնները, որոնք կապահովեն տնտեսության արդիականացումը: Ժամանակակից աշխարհում սրանք պետք է դիտել ուղղակի որպես տնտեսական կատեգորիաներ:

Այո, ազգային, այո, ճշտապահ, այո, աշխատասեր... ու ավելի, քան, ասենք, չինացիները, ճապոնացիները կամ գերմանացիները: Սա պետք է լինի մեր բարձր նշաձողը: Իսկ ինչու ոչ: Կարող ենք առանձնացնել այն պատճառները, որ խանգարում են դրան: Եթե կան այդպիսիք, ուրեմն պետք է մատնանշվեն, առանձնացվեն ու աշխատանք տարվի



դրանց հաղթահարման ուղղությամբ: Ազնվություն, արդարամտություն, վեհանձնություն ու բարոյականություն, աշխատասիրություն և, վերջապես, սեր մերձավորի նկատմամբ: Այս հատկությունները, ցավոք, վճռորոշ տեղ չունեն այսօր մեզանում, քանզի նյութականն ու դրա պաշտամունքն է արժեձևավորող գործոն դարձել, իսկ հայրենասիրությունը անմիտների կատեգորիա է, «անմիտներ», որոնց վրա են միշտ ու հատկապես իրենց կրիտիկական պահերին հենվել երկիրը, ժողովուրդը: Այդ նույն ժողովուրդը, այսինքն մենք, այսօր կազմված ենք նիրհող հայրենասերից, թաքնված հայրենասերից, կոնյունկտուրային հայրենասերից, կեղծ հայրենասերից, հայրենասիրությունը բացահայտ կամ կատակով ծաղրողներից, նախորդներին հանդուրժող հայրենակիցներից: Սակայն մեզ այսօր պետք են արթուն հայրենասերներ, էնտուզիաստ, հաշվենկատ հայրենասերներ, հայրենասիրություն սովորեցնող հայրենասերներ են պետք՝ մարդիկ, ովքեր այսօրվանից ճանաչում ու սիրում են իրենց երեխաների վաղվա հայրենիքը, ինչպես սիրում են կամ պատրաստ են սիրել իրենց ապագա թոռներին, հարսներին ու նրանց երեխաներին (երկրի ապագա տեսլականը): Նրանք, ովքեր այսօր մի հովանավոր, ծանոթ, խնամի կամ բարեկամ են գտել քաղաքական մեծ կամ միջակ վերնախավում, կուսակցական խորհուրդներին մոտ դրված աթոռին նստելու պատեհություն են որսացել, պետք է հասկանան, որ ցանկացած երկրի տնտեսություն հիմնվում է մարդկանց՝ իր քաղաքացիների վրա: Ու տնտեսության բնույթն էլ մեծ հաշվով պայմանավորվում է այդ տարբեր մտածելակերպ ու արժեքներ ունեցող մարդկանց քանակով, երբեմն, ցավոք, կեղծ-ուժեղներով և դրանցից զուրկ անհուսալի թույլերով:

Այսպիսով, տնտեսության արդիականացման գործընթացում կենտրոնական նշանակություն է ձեռք բերում մարդկային



կապիտալը: Մարդկային զարգացման նպատակը պետք է ի վերջո դրվի տնտեսության զարգացման մեր երկարաժամկետ հեռանկարի հիմքում: ՀՀ-ում մարդկային զարգացումը պետական քաղաքականության մակարդակում դեռևս բավարար չափով չի կարևորվում և հաճախ դառնում է մարդկային զարգացման համար նպաստավոր միջավայրի պահանջմունք ունեցող մարդկանց հոռետեսության և միգրացիոն շարժերի դրդապատճառ:



Մարդը հանդիսանալով տնտեսական աճի ու զարգացման թե միջոց և թե նպատակ, առաջիկայում պետք է դրվի բոլոր քաղաքականությունների ու հեռանկարային ծրագրերի հիմքում: Չցանկանալով սույն հոդվածի շրջանակներում ծավալվել տնտեսական զարգացման տեսությունների ու իրար հաջորդող հայեցակարգերի շուրջ, ուզում եմ ուղակի նշել, որ մարդու՝ որպես տնտեսական զարգացման ու առաջընթացի ապահովման անփոխարինելի ու կենտրոնական միջոցի հնարավորությունները գործնականում անսպառ են: Մաrղու, ոrղես ցանկացած եrկrի ու hաsկաղես Հայասsանի նման եrկrի առանցfային ռեսուrսի, սsեղծագոrծոrեն-ինովաsիվ իrացվելու հնաrավոrությունների աղահովման hաrցեrին ղեsf է ուղղված լինեն առաջիկա մեr fաղաfականությունեrն ու hաcվաrկնեrը: Աշխարհում վաղուց հայտնի մոտեցում, ինչի մասին վկայող տարբեր հրապարակումներ վերջին ժամանակներում, հուրախություն մեզ, հայտնվել են հայկական գիտագործնական տարբեր

1. Ատոմ Մարգարյան, «Ազգային նորամուծային համակարգը զարգացման մարտահրավերների համատեքստում», «Վէմ», 2009, հուլիս-սեպտեմբեր, թիվ 2 (27): Աշոտ Մարկոսյան, Ռուբեն Ղանբարչյան, «Կրթական համակարգի դերը տնտեսության զարգացման գործընթացում», «21-րդ դար», թ.3, 2010: Գագիկ Հարությունյան, «Զարգացման ռազմավարություն և աշխարհաքաղաքական սցենարներ», «21-րդ դար», թ.3, 2010: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն. «Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2009»:

հետազոտություններում[1]:

**Բ. Տեսական ծուղակներ արդիականացման ճանապարհին (արդիականացմանն ընդդիմացողները)**

Ազգային տնտեսությունը բուն էկոնոմիկական և ազգային անվտանգության նկատառումներից ելնելով պահանջում է, որպեսզի մեր հասարակական-տնտեսական շրջանակները լինեն մշտարթուն, որպեսզի մենք «շուկայական հարաբերությունների» կամ «ազատ առևտրի» կարգախոսներով չհայտնվենք առավել առաջադեմ ու կայացած ինստիտուտներով երկրների ծուղակներում: Նրանց տնտեսությունները գործում են բացառապես իրենց ազգային շահերից ելնելով: Աշխատատեղերի ու ներքին շուկայի պաշտպանություն, նոր շուկաների ու տարածքների յուրացում, մշակութային էքսպանսիա, հումքի և ուղեղների ձեռք բերման էժան մեխանիզմների որոնում, նոր տեխնոլոգիաների ստեղծում: Սրանք են բավարար չափով կայացած գրեթե բոլոր երկրների հիմնական ձգտումները տնտեսության բնագավառում: Այս ամենը շատ բնական է: Առաջին հայացքից «գերտերությունների» կողմից թույլերի նկատմամբ լարվող ծուղակներն իրականում ավելի շատ նման են հասարակության ու տնտեսության իրական հատվածի նկատմամբ իշխող ֆինանսական օլիգարխիայի կողմից լարված տեսական-գաղափարական ծուղակների և/կամ կամային-մտավոր- հոգեբանական թույլ պատրաստված հասարակության արդարացման[2]: Արդիականացվելու համար մեզ պետք է ձերբազատվել տնտեսության բնագավառում արմատացած այնպիսի միֆերից, ինչպիսիք են «պետությունը վատ կառավարիչ է», «բյուջեի դեֆիցիտը կամ սղաճը վատ բան է», «դոտացիան կամ պետական աջակցությունը վատ բան է», «ազատ շուկան և մրցակցությունը ամեն ինչ կկարգավորեն», «պետական միջամտությունը վնասում է տնտեսությանը» և, վերջապես, «տնտեսական աճը լուծում է բոլոր խնդիրները»[3]:



2. Հատկանշական է վերջերս ՀՀ Ազգային ժողովում քաղաքական մեծամասնության կողմից տեղական արտադրության ծխախոտի և օղու դրույքաչափերի բարձրացման մասին օրինագծերի անցկացման օրինակը:
3. Արա Նռանյան, «Տնտեսական միֆեր և իրական տնտեսություն», «Դրօշակ», N 6, նոյեմբեր, 2007:



Այս ծուղակներն ու միֆերը ըստ էության տեսական են ու մեր կառավարման համակարգից, գիտական, հասարակական ինստիտուտներից է կախված դրանց գործնականի վերածվելու վտանգի չեզոքացումը: Հակառակ դեպքում այսօր կամ վաղը դժվար է պատկերացնել, թե ինչ է դասավանդվելու, ասենք, «Հայաստանի տնտեսական աշխարհագրություն» առարկայից, կամ ինչպես է ուսանողին պարզաբանվելու, թե տնտեսական կամ հարկային քաղաքականության տակ Հայաստանում ինչ ենք հասկանում:

### Գ. Հոգեբանական-մտային-կամային կարգաբերում

Վերջապես, տնտեսության արդիականացման կարևոր նախապայման ու բուն արդիականացման գործընթացի առաջնային քայլ է երկրի հոգեբանական-մտային-կամային կարգաբերումը: Խոսքը հասարակության բոլոր շերտերի ու պետական-հասարակական ինստիտուտների տրամադրվածության մասին է, որին պետք է հասնել հավատ, տրամադրություն, խթաններ ու հայրենասիրական լրացուցիչ ոգի ներարկելով հասարակական հարաբերությունների միջավայրում:

Այստեղ կարևոր է այն նշաձողը, որի հաղթահարմանը տրամադրվում ենք: Որքան հասարակության պետական դեկն իր ձեռքը վերցրած վերնախավը բարձր է դիրքավորում իր նշաձողը գլոբալ աշխարհում, այնքան աշխատանքն առավել արդյունավետ, իսկ ձեռքբերումներն էական կլինեն: Այս մակարդակում **ազգը հավաfական ձևով դեsf է նcաձողի բարձրության նկասմամբ հավակնություններr նerկայացնի այնդես, ինչդես մենf դա անում ենf մեr անձնական ամբիցիաներից ելնելով անհաsական մակաrդակում**: Այս տեսանկյունից ներկայումս մեծ խզում գոյություն ունի երկրի ներսում հաջողված առաջնորդների (նկատի ունեմ տարբեր բնագավառների լիդերներին) ու աշխարհում մեր երկրի հնարավորությունների (վարկի) առումով. դրանք մեղմ ասած համահունչ չեն: Այնինչ մեր համեմատությունների եզրերը տարբեր ասպարեզներում պետք է լինեն ոչ թե, օրինակ, Վրաստանն ու



Ղրղզստանը, այլ առնվազն Թուրքիան ու Իրանը: Տերությունների հետ, որոնց մենք անվանում ենք գործընկեր, պետք է բանակցենք ու կռիվ տանք յուրաքանչյուր



օրակարգային հարցի առումով՝ հավասարը հավասարի տրամադրվածությամբ ու ակնկալիքներով: Պետք է կրկին ու կրկին հիշենք մեր Սփյուռքը, մարդկային կապիտալի վճռորոշ հանգամանքն ու մեզ հզոր զգանք, դրանից բխող համապատասխան հավակնություններով ու նախաձեռնություններով:

**Ամփոփում**

Արդիականացման գործընթացի մասին կառուցողական խոսել՝ նշանակում է առնվազն երկու բան. ա) տեսնել ու ընդունել սեփական սխալները, բ) հավատալ սեփական ուժերին: Տնտեսության բնագավառում սեփական ուժերի վրա հենվելը անհրաժեշտ նախապայման է կայուն զարգացման ուղի դուրս գալու համար:

Արդիականացում որևէ երկրի տնտեսության ոլորտում նշանակում է վերոնշյալ արժեքների տնտեսական իմաստա-

վորմամբ տվյալ երկրի ազգաբնակչության խառնվածքի, սովորույթների, մտավոր պոտենցիալի ու ազգային իղձերի վրա հիմնված յուրահատուկ ստեղծագործ շինարարության իրականացում:

Հայ ազգի ու հայաստանյան տնտեսության դեպքում համընդհանուր զարգացման շարժիչին զուտ տնտեսական դրդապատճառներից բացի լրացուցիչ ուժ պետք է հաղորդեն նաև անվտանգության ու ազգային դարավոր իղձերի իրականացման մղումները, որոնք, կարծում ենք, որ ոչ բոլոր պետություններում են այդքան տեսանելի ու առարկայական: Ուստի այս գործոնները պետք է այնպես ուղղորդել, որպեսզի դրանք լրացուցիչ ազդակ հանդիսանան ՀՀ տնտեսական պոտենցիալի հզորացման համար:

Արդիականացում կոչվող դժվարին ու երկարատև ճանապարհին առաջնային է երկրի կառավարող էլիտայի դերը: Օպտիմալ-բարձր նշաձողի դիրքավորում, համապատասխան սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորում, արդյունավետ կառավարում, ինստիտուտների նկատմամբ հավատի վերականգնում: Սրանք կարող է կյանքի կոչել առաջնորդի ծիրքով, ավյունով ու վճռականությամբ լեցուն հոգեբանական-մտայինկամային ճիշտ կարգաբերմամբ ազգային գործիչը:



# Դեդուկտիվիզմը ՀՅԴ գաղափարախոսության մեջ

*Կարեն Խանլարյան*

Դեդուկցիան մտահանգման, կշռադատման տրամաբանական եղանակ է, համաձայն որի հնարավոր է ընդհանուր նախադրյալի, կանխավարկածի (հիպոթեզի) առկայությամբ եզրակացություններ հանգնել մասնավոր դեպքի մասին:

Հենց սկզբից պետք է հաստատել, որ դեդուկտիվիզմը, տրամաբանության գերակա եւ տիրական մեթոդ լինելով, բնավ էլ չի թերարժեւորում մյուս մեթոդների, այդ թվում նաեւ ինդուկտիվիզմի դերն ու նշանակությունը: Տրամաբանության մեջ հաճախ մի քանի մեթոդ օգտագործվում են զուգահեռաբար: Այս հանգամանքը ընդգծել է նախորդ դարի սովետական փիլիսոփայության խոշոր տեսաբաններից Մարկ Մոիսեեւիչ Ռոզենտալը. *«Ռեալ ճանաչողության մեջ,-* ասում է նա,- *ինդուկցիան միշտ հանդես է գալիս դեդուկցիայի հետ միասնության մեջ: Դիալեկտիկական մատերիալիզմը ինդուկցիան եւ դեդուկցիան դիտում է ոչ թե որպես ունիվերսալ ինքնաբավ մեթոդներ, այլ որպես անխզելիորեն կապված եւ իրար պայմանավորող մոմենտներ իրականության դիալեկտիկական ճանաչողության մեջ, ուստի եւ հանդես է գալիս դրանցից ամեն մեկի դերի միակողմանի չափազանցության դեմ»* (Ռոզենտալ Մ. Մ., Փիլիսոփայական բառարան, Երեւան, 1975, էջ 163):

Այն մասին, թե ինչո՞ւ էր սովետական փիլիսոփայական միտքը հանդես գալիս «ամեն մեկի դերի միակողմանի չափազանցության դեմ», մենք դեռ կանդրադառնանք: Վերադառնանք նյութին:

Դեդուկտիվ եւ ինդուկտիվ մեթոդները գրեթե զուգորդված են, հատկապես պարզ, ֆիզիկական եւ մեխանիկական համակարգերի հետազոտության պարագայում: Դեռ ավելին, բոլոր այն համակարգերում, որոնք հնարավոր է մաթեմատիկորեն մոդելավորել, ինդուկտիվ մեթոդը կարելի է կիրառել միայնակ: Ինդուկտիվ մեթոդի կիրառման դասական օրինակ է Կեպլերի

եռյակ օրենքը: Կեպլերն աստղագիտական բազմաթիվ տվյալների վերլուծման հիման վրա հայտնաբերեց արեգակնային համակարգի մոլորակների ուղեծրերի մաթեմատիկական տեսակը՝ էլիպս: Նա հայտնաբերեց նաեւ, որ յուրաքանչյուր ուղեգծային էլիպս գտնվում է երկչափ հարթության մեջ: Կեպլերն իր օրենքները մշակեց միայն չափման եւ փորձի հիմամբ եւ, իհարկե, զուտ ինդուկտիվ մեթոդով:

Այսուհանդերձ, կեպլերյան ինդուկտիվիզմի մասին էական դիտողություններ է անում Բրիստոլի համալսարանի փիլիսոփայության բաժնի պրոֆեսոր Ջեյմս Լեյդիմանը: Ըստ նրա, Նյուտոնի ձգողականության (գրավիտացիայի) տեսությունը հիմնված չէր փորձի եւ աստղագիտական տվյալների վերլուծության վրա, մշակվել էր զուտ դեդուկտիվիզմի սկզբունքով եւ, միաժամանակ, հաստատում էր ինչպես Գալիլեյի, այնպես էլ Կեպլերի բոլոր օրենքները: Մի՞թե միայն Կեպլերի «մասնակիից ընդհանուրը» տանող ճանապարհով գիտությունը կհասներ ձգողականության օրենքին: Եթե դա հնարվոր լիներ, ապա ինչո՞ւ Կեպլերին չհաջողվեց իր փորձագիտական օրենքները հիմնավորել որեւէ տիեզերական բանաձեւով: Իհարկե, այդ գործն անելու համար նյուտոնյան դեդուկտիվ միտք էր հարկավոր: Լեյդիմանը հիմնավորում է, որ տեսական գիտություններում էլ հիմնական թռիչքները կատարվել են ոչ թե ինդուկտիվ, այլ դեդուկտիվ եղանակներով (տես՝ Ladyman J., Understanding Philosophy of Science, Routledge: London & New York, 2002):

Ֆիզիկայի բնագավառում դեդուկտիվ մեթոդի կիրառման ցայտուն օրինակներից է նաեւ Այնշտայնի վարկածը՝ տարածության եւ ժամանակի հարաբերականության, ձգողական դաշտում տարածության կորացման եւ ժամանակի դանդաղեցման մասին, որն ավելի ուշ միայն հաստատվեց բազմաթիվ գիտափորձերի միջոցով (տես՝ Ասատրյան Մ., Փիլիսոփայության ներածություն, Երեւան, էջ 205-211): Հայտնի փաստ է, որ Նյուտոնն էլ իր ձգողականության տեսությունը հետագայում փորձարկեց Կեպլերի եւ Տիկոբրահեի աստղագիտական տվյալներով:

Մարդու արտափորձային, դեդուկտիվ միտքը, որն ի դեպ հեղափոխել է գիտության ու փիլիսոփայության ընթացքը, անշուշտ, պայմանավորված է մարդու բազմադարյան պրակտիկ ճանաչողությամբ: Սրան, մաթեմատիկայի եւ Ֆազզի տրամաբանության (Fuzzy Logic) լեզվով՝ «ինտելիգենտ, ուշիմ մարդ էակ» են անվանում, որին ցայժմ չի փոխարինում եւ ոչ մի ինդուկտիվ տրամաբանությամբ օժտված «արհեստական ուղեղ»:

Գանք ՀՅ Դաշնակցության պատմահայեցողության հարցին: Որպես կարեւոր ընդգծում այստեղ մեջբերում ենք ՀՅԴ հիմնադիր Սիմոն Զավարյանի տեսակետը: Նա իր «Ծրագրի շուրջ» հոդվածում գրում է. *«Դեդուկտիվ հիմքերի վերա հաստատված քննեական ու սոցիալական*


Սիմոն Զավարյան

*տեսություններն համարվելու են առայժմ իբրեւ նախնական ուղեցույց հարցերի պարզաբանության համար: Գիտական արժեք կստանան նրանք միայն հետո, երբ կամփոփվին ինդուկցիայի շնորհիվ: Սակայն վերջինս եւս, մասնավոր երեւույթների ընդհանրացումների միջոցավ այս կամ այն երեւույթին վերջնական անսխալ գնահատում տալը, դժվար թե վերջնական ճշմարտություն համարվի ներկայումս: Այնքան տարբեր է հասարակական կյանքը այլ եւ այլ երկրներում, պատմական զանազան շրջաններում»* (Սիմոն Զավարյան, Գ. հատոր, Անթիլիաս, 1997, էջ 616): Ինչպես նկատելի է, Զավարյանը դեռ անցյալ դարասկզբին ուրվագծել է դե-

դուկտիվ մեթոդի ուղեցույցային բնույթը, իսկ ինդուկտիվ մեթոդի՝ լրացուցիչ, ամրապնդող նշանակությունը:

ՀՅԴ գաղափարախոսական հայացքների հոլովույթը ցույց է տալիս, որ այն սկզբից եւեթ իր գաղափարական արժեհամակարգը չի կապել որեւէ փիլիսոփայական դպրոցի եւ վարդապետության հետ: Այս մոտեցումը, մեր կարծիքով, լայն հնարավորություն է տվել ՀՅԴ-ին զերծ մնալու ֆանատիկոսությունից ու դոգմատիզմից եւ օգնել՝ իր գաղափարախոսական հիմունքները համապատասխանեցնելու ժամանակի ոգուն: Բացարձակորեն չնույնանալով որեւէ վարդապետության, ՀՅ Դաշնակցությունը, այնուամենայնիվ, մի քանի փիլիսոփայական դպրոցներից փոխառել է մեթոդաբանական նշանակության սկզբունքներ եւ դրանք կիրառել իր աշխարհընկալման ձեւակերպումների մեջ: ՀՅԴ-ի արժեհամակարգի ձեւավորման մեջ հիմնական ներգործություն են ունեցել սինթետիկական մոնիզմը, համակարգային տեսությունը եւ քննադատական փիլիսոփայության այլ դպրոցները: *«Ավեստայի եւ Մանիի փիլիսոփայությունը,-* ասում է Էդիկ Հովհաննիսյանը,- *մեծ ազդեցություն է ունեցել ՀՅ Դաշնակցության աշխարհահայացքի հիմնավորման վրա»* (Հովհաննիսյան Է., Ազգային քաղաքականության փիլիսոփայությունը /Համակարգային աշխարհահայացք/, Բեյրութ, 1979, էջ 15):

Այս շարքը կարելի է համալրել նաեւ Կանտով, Միխայելովսկիով եւ Լավրովով: Նշված փիլիսոփայական մտքերում, անկախ մանրամասնություններից, ընդհանրությունը կայանում է նրանց դեդուկտիվ կշռադատման, մտահանգման մեջ:

«Ընդհանուրից մասնակիին» մտահանգման եղանակին գերակա նշանակություն տալու մասին բացատրականներով բազմիցս հանդես է եկել ՀՅԴ տեսաբան Երվանդ Ֆրանգյանը: Նրա բնորոշմամբ, դեդուկտիվ մոտեցումը նույնիսկ համարվում է փիլիսոփայության առանձնահատկություն. *«Փիլիսոփայական մտածողության առանձնահատկությունը կայանում է հենց նրանում, որ նա չի վերցնում առանձին հարցերը եւ քննում իրենց առանձնության մեջ, այլ նա հարցերը քննում է իրենց ամբողջության, իրենց ընդհանուր կապակցության մեջ»* (Ֆրանգյան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայացքը- իրապաշտ փիլիսոփայություն, Փարիզ, 1929, էջ 13): Նա առավել պարզաբանելով իր փիլիսոփայական համոզմունքները, դեդուկտիվ մոտեցումը համարում է «իրապաշտ պատմահայեցողության» կամ «իրապաշտ պատմափիլիսոփայության» նախահիմքը: Ասենք նաեւ, որ ե՛ւ Երվանդ Ֆրանգյանը, ե՛ւ հետագայում Հրաչ Տասնապետյանը «իրապաշտ պատմահայեցողությունը» համարել են ՀՅԴ աշխարհայացքի փիլիսոփայական հենքը: *«Իրապաշտ պատմահայեցողությունը,-* գրում է Ֆրանգյանը,- *դիտում է բոլոր գործոնները, ավելի ճիշտ պարբերը իրենց ընդհանուր կապակցության եւ զարգացման մեջ»*



Էդվարդ Հովհաննիսյան

(Ֆրանգյան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայացքը- իրապաշտ փիլիսոփայություն, Փարիզ, 1929, էջ 155):

Երվանդ Ֆրանգյանն իր այս մեթոդաբանությամբ քննադատաբար էր մոտենում Մարքսի պատմական մատերիալիզմին եւ դասակարգային պայքարի տեսությանը, փաստորեն, դրանք համարելով ինդուկտիվ մտաեղանակի արգասիքներ: *«Կարլ Մարքսը,-* գրում է Ֆրանգյանը,- *ուսումնասիրեց 19-րդ դարի ֆրանսիական պատմագիրներ Տիերրիի, Գիզոյի եւ Լուի Բլանի գործերը եւ իմացավ նրանցից, որ Ֆրանսիայի քաղաքական պատմությունը միջին դարերից ի վեր դիտելի է որպես մշտնջենավոր պայքար երկու մեծ դասակարգերի՝ ֆեոդալականության ու բուրժուազիայի միջեւ: Եվ նա*

*պարածեց դասակարգային պայքարի ըմբռնումը ամբողջ համաշխարհային պատմության վրա. հայտարարեց, դրանով իսկ, որ այդ պատմությունը առաջ է մղվում տնտեսական, նյութական պայքարներով, դասակարգային շահերի հավիտենական բախումներով»* («Դրօշակ», մայիս-յունիս 1911, էջ 71): Իրականում ո՞րն է Ֆրանգյանի քննադատության բուն իմաստը, եթե ոչ պատմական եւ աշխարհագրական մասնակի ժամանակահատվածից պատմահայեցողական ընդհանրացում անելն ու տիեզերական օրենք հռչակելը մարդկության ողջ պատմության համար:

Մարքսիստ փիլիսոփաները լավ գիտակ էին Մարքսի փիլիսոփայության հիմքում դրված ինդուկտիվ մեթոդի առկայությանը: Իսկ մյուս կողմից էլ նրանք իրազեկ էին դեռ Կանտից սկսած դեդուկտիվիզմի հուժկու առաջընթացին եւ տեսնում էին, որ գիտության զարգացմանը զուգընթաց աստիճանաբար նահանջում է հեգելյան դիալեկտիկան: 20-րդ դարի գիտական եւ փիլիսոփայական աշխարհի սրընթաց զարգացման հեւքում, մարքսիստ փիլիսոփաները, տրամաբանորեն, չէին կարող այլեւս կրկնել փիլիսոփայության վախճանի մասին Մարքսի կանխատեսումը եւ չէին կարող պնդել ինդուկտիվիզմի միակ եւ անփոխարինելի նշանակության վրա:

Ինքը՝ Մարքսը, անշուշտ, փորձում էր իր փիլիսոփայական մեթոդոլոգիան համապատասխանեցնել օրվա գիտության նվաճումներին: Նրա ժամանակներում գիտության տարբեր ոլորտների տիրական մեթոդիկան ինդուկցիան էր: Հասարակագիտության եւ պատմագիտության մեջ դեդուկտիվ մեթոդի զարգացմամբ, մարքսիստները փորձում էին վերանայել իրենց փիլիսոփայության մեթոդոլոգիան: Նրանք, ելնելով դիալեկտիկայի մեթոդաբանությունից, ինդուկցիան ֆիքսում էին թերեւս որպես դրույթ (թեզ), իսկ դեդուկտիվ կշռադատության զանազան ձեւերը (հիպոթետիկ դեդուկցիա, աքսիոմատիկ դեդուկցիա, գենետիկ դեդուկցիա եւ այլն) համարում հակադրույթ (անտիթեզ): Սինթեզը, ըստ դիալեկտիկայի, անհրաժեշտաբար պետք է գոյանար: Մարքսիստ փիլիսոփաներից շատերը դեդուկտիվիզմի եւ ինդուկտիվիզմի համազորության սկզբունքը համարեցին այդ սինթեզը: *«Փիլիսոփայության մեջ,-* գրում է Ռոզենտալը,- *փորձեր են եղել խիստ սահման անցկացնելու դեդուկտիվ մեթոդի եւ մյուս մեթոդների (օրինակ՝ ինդուկտիվ) միջեւ, մեկնաբանելու դեդուկտիվ կշռադատությունը որպես արտափորձային եւ խիստ չափազանցելու դեդուկցիայի դերը գիտության մեջ: Իրականում դեդուկցիան եւ ինդուկցիան անխզելիորեն կապված են իրար հետ»* (Ռոզենտալ Մ. Մ., Փիլիսոփայական բառարան, Երեւան, 1975, էջ 103): Սինթեզը, ըստ ամենայնի, այս երկուսի հավասարեցումն է, ուստի դիալեկտիկական մատերիալիզմը *«հանդես է գալիս,-* եզրակացնում է Ռոզենտալը,- *դրանցից ամեն մեկի դերի միակողմանի չափազանցության դեմ»* (Ռոզենտալ Մ. Մ., Փիլիսոփայական բառարան, Երեւան, 1975, էջ 163):



Երվանդ Ֆրանգյան

Մարքսիստ փիլիսոփաներին տրամաբանական այլ ելք չէր էլ մնում: Դեդուկտիվիզմի «միակողմանի չափազանցությամբ», փաստորեն, խոցելի էին դառնում, հատկապես, պատմական մատերիալիզմի, ֆորմացիոնալ տեսության եւ դասակարգային պայքարի մարքսյան հիմնավորումները: Հետեւաբար նրանք տեսաբանորեն բուռն կերպով հակասեցին դեդուկտիվիզմի գերակայության ամեն մի արտահայտության, ամեն մի գաղափարի, արդարացնելու համար իրենց փիլիսոփայության ինդուկտիվ հիմունքները:

ՀՅԴ մի այլ տեսաբան՝ Միքայել Վարանդյանը դեդուկտիվիզմի գերակա դիրքի մասին, իր ինքնատիպ ոճով, ուշագրավ մեկնաբանություն է տալիս, ասելով. *«Երբ մարդկային միտքը հոգնում է ան-*

*վերջ ու ապարդյուն խուզարկումներից, անզոր լուծելու փորձի ու բանականության ճանապարհով տիեզերական այդ խորախորհուրդ առեղծվածները, նա ի վերջո կանգ է առնում մի գերագույն, սկզբնական ու երեւակայական պատճառի վրա, նա ընդունում է մի նախնական շարժիչ, մի խթան, մի հսկա եւ խոլական ճարտարապետ, մի «արարիչ»- եւ տալիս է նրան այս կամ այն անունը, նայած իր մտակազմին, իր կրթության աստիճանին, իր հոգու եւ խառնվածքի թելադրումներին: Մին անվանում է այդ «արարիչ-աստուծուն» հավիտենական ՈՒԺ, մյուսը ՆՅՈՒԹ; մյուսը Ուժ-նյութ, սուբստանց, մյուսը ԻԴԵԱ, գաղափար...»* (Վարանդյան Մ., Կրոն եւ գիտություն, Կ. Պոլիս, 1912, էջ գ): Այսպիսով Միքայել Վարանդյանն էլ, մասնակի հետազոտությունը չմերժելով հանդերձ, առաջ է քաշում «ինտելիգենտ, ուշիմ» մարդ էակի մտքի դեդուկտիվ թռիչքը, որը վեր է կանգնում մասնակի դեպքերի ընդհանրացումներից եւ որոնում մտահանգման ընդհանուր բանաձեւեր:



Իսահակ Նյուտոն

Իհարկե կան նաեւ ինդուկտիվ տրամաբանությամբ հայտնաբերված մաթեմատիկական բազմաթիվ օրենքներ: Բնագիտական բացառություններ, ինչպես նաեւ մաթեմատիկական բացառություններ էլ կան՝ միշտ եւ ամենուրեք: Այդպիսիք կան, հատկապես, ինդուկտիվ եղանակներով ապացուցված օրենքներում: Օրինակ, ինդուկցիայով կարելի է ալգորիթմ մշակել՝ մինչեւ եռանիշ առաջին թվերի համար, սակայն այդ ալգորիթմը չի գործում քառանիշ թվերի պարագայում: Կամ, Ֆերմայի հայտնի թեորեմը մշակվել է զուտ դեդուկտիվ եղանակով ու ցայժմ ոչ ապացուցվել եւ ոչ էլ հակացուցվել է, սակայն ոչ մի բացառություն չի հայտնաբերվել դրան մերժելու համար:

Որեւէ երեւույթ կարելի է վերլուծել երկու տարբեր տրամաբանություններով, սակայն հնարավոր չէ հանգել երկու հակասական հետեւությունների: Գիտական մեթոդները, ըստ էության, առաջնորդվում են համատեղելիության (compatibility) սկզբունքով, հետեւաբար չեն կարող տարբնույթ եզրակացությունների հանգել նույն երեւույթի վերաբերյալ: Մեթոդների տարբերակման եւ աստիճանավորման հարցը կայանում է նրանց կարողականության, ճշգրտության եւ տարողունակության մեջ: Դեդուկտիվ եղանակը, փաստորեն, ընդունում է առավել մեծ մասշտաբներ եւ ընդգրկում երեւույթների վերլուծության առավել մեծ շրջագիծ: Դեդուկտիվ կշռադատման զարգացումը եւ դրա սահմանների ընդարձակումը, նորից ենք ցանկանում շեշտել, բնավ չի բացառում ինդուկտիվիզմը, այլ, միայն, ապահովում է դեդուկտիվիզմի գերակա դիրքը մյուսների նկատմամբ:

Մեթոդների սահմանափակ լինելով եւ դրանց անընդգրկունակությամբ է նաեւ պայմանավորված եղել մայր գիտության տրոհման եւ մասնագիտությունների ձեւավորման երեւույթը: Ֆիզիկայի եւ մետաֆիզիկայի սահմանազատումը հենց այդ տրոհման սկզբնակետը կարելի է համարել: Անցյալ դարասկզբից, սակայն, գիտական եւ փիլիսոփայական մոտեցումների զարգացման շնորհիվ, նկատելի է մասնագիտությունների վերամիավորման, տիեզերական, ունիվերսալ մեկ դիսցիպլինի ներքո համախմբման ձգտումը, որը չի վրիպել Երվանդ Ֆրանգյանի տեսադաշտից. *«Գիտությունների ճյուղավորման երեւույթի հետ միաժամանակ,-* գրում է նա,- *նկատելի է նույնպես մի այլ երեւույթ, նույնքան բնորոշ եւ հետաքրքրական.- այն, որ գիտությունները ջգտում են հետ գնալ իրենց մոր գիրկը, այնտեղ, որտեղից սկիզբ էին*

*առել: Պետք է ընդունել, որ գիտությունների բաժանումը հայտնի չափով կամայական է: Մի շարք միտումնավոր եւ գործնական նկատառումներ կան այդ բաժանման հիմքում դրված»* (Ֆրանգյան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայացքը- իրապաշտ փիլիսոփայություն, Փարիզ, 1929, էջ 12-13):

Այս երեւույթն ակնարկում են բազմաթիվ այլ գիտնականներ եւս, որոնցից կարելի է հիշատակել «համակարգային տեսության» նախահայրերին՝ Կարլ Լյուդվիգ Բերտալանֆիին եւ Քեննետ Բուլդինգին:

Բնականաբար, «մոր գիրկը վերադառնալու» ձգտումը պետք է մեկնաբանել ու բացատրել մերօրյայ պատկերացումներով եւ առանց մասնագիտությունների կամ գերմասնագիտությունների նշանակության բացառման: Բուն ձգտումը նշանակում է, որ գիտության մեջ, աստիճանաբար, ի հայտ են գալիս միջդիսցիպլինար բնույթի դեդուկտիվ սկզբունքներ, որոնք գործում են եւ՛ ֆիզիկա- մաթեմատիկական եւ՛ պատմագիտական ե՛ւ տնտեսագիտական ե՛ւ հասարակագիտական բնագավառներում: Այդպիսի սկզբունքներ են իրենց մեջ պարունակում համակարգային տեսությունը, Ֆազզի (Fuzzy) տրամաբանությունը, կիբեռնետիկան, Գենետիկական Ալգորիթմը եւ այլն:

Հայ խոհափիլիսոփայության արդիական շրջանում **համակարգային տեսության** տեսաբաններից է դոկտ. Էդիկ Հովհաննիսյանը: Շահեկան ենք համարում այստեղ մեջբերել դաշնակցական մտավորականի մտքերը՝ արծարծվող թեմայի հետ կապված: Էդիկ Հովհաննիսյանը, բացատրելով համակարգային տեսության հիմունքները եւ այդ տեսության էական առընչությունները ու նմանությունները Երվանդ Ֆրանգյանի մեկնաբանած սինթետիկական մոնիզմի հետ, ասում է. *«Ամենակարեւորն այն է, որ բարդ համակարգը չի վերածվում բաղկացուցիչ մասերի գումարի: Մեր համակարգային աշխարհահայացքի համաձայն, մասնիկները գոյություն ունեն միայն որոշ ամբողջական համակարգի մեջ, որն այդ խմաստով մասնիկների համեմատ ավելի առաջնակարգ է: Այսինքն՝ համակարգն առաջնակարգ է, իսկ մասնիկները՝ ածանցյալ: ...Օրինակ՝ համակարգային տեսանկյունից գիծը ոչ թե որպես կետերի գումար է ճանաչվում, այլ որպես ամբողջական մի երկարություն, որի վրա տեղավորված են կետերը, որովհետեւ կետերի անորոշ կուտակումը երբեք գիծ չի ստեղծի: Գծից կետ կարելի է ստանալ, բայց հակառակը՝ ոչ: Հակառակը ստանալու համար, մեր մտքում մենք արդեն իսկ պետք է ունենանք գծի գաղափարը, որն այդպիսով կետից առաջնակարգ է դառնում: Ժամանակը վայրկյանների գումարը չէ, այլ անցյալի, ներկայի եւ ապագայի միասնություն»* (Հովհաննիսյան Է., Ազգային քաղաքականության փիլիսոփայությունը /Համակարգային աշխարհահայացք/, Բեյրութ, 1979, էջ 34-35): Էդիկ Հովհաննիսյանի համակարգային դիտանկյունից կարելի է ընդհա-



Հրաչ Տասնապետյան

նուրից մասնակիին գնալ, բայց մասնակիից ընդհանուրին՝ չի կարելի, կամ էլ գնալու դեպքում, նախ պետք է ունենալ ընդհանուրի գաղափարը:

Դեդուկտիվիզմի գերակայության դիրքերից է հանդես գալիս նաեւ ՀՅԴ տեսաբան Հրաչ Տասնապետյանը: Նա գրում է. *«Երեւույթներու պատճառականության պետք չէ մոտենալ նյութի գիտության դասական այն ըմբռնումով՝ որ միակ եւ միեւնույն պատճառին կհամապատասխանեցնէ միակ եւ միեւնույն արդյունքը: Հարկ է մոտեցման եղանակը փոխել ու փնտրել, թե պատճառներու համագումար ի՞նչ ամբողջություն միշտ կհառաջացնէ ընկերային տվյալ ընդհանուր*

*երեւոյթը եւ թէ ընդհանուր այդ երեւոյթը պայմաններու համագումար այդ ամբողջութեա՞ն կբխի միայն»* (Տասնապետյան Հ., Հեղափոխություն, Բեյրութ, 1978, էջ 65-66):

ՀՅԴ անդրանիկ Ծրագիրը մշակվել է 1890-ականների առաջին տարիներին: 1907թ. ամբողջական փոփոխմամբ հրապարակվել է ՀՅԴ երկրորդ Ծրագիրը, որի քաղաքական պահանջների բաժինը վերամշակվել է 1919թ.: 1978-82թթ. հրապարակվել եւ հաստատվել է ՀՅԴ երրորդ Ծրագիրը: Իսկ 1998 թվականից ցայժմ գործում է ՀՅԴ չորրորդ Ծրագիրը: Գաղափարախոսական սույն փաստաթղթերը հիմնական գաղափարների արծարծման իրենց ձեւաչափերով զգալիորեն տարբերվում են, սակայն բոլորի միջով, կարմիր գծի պես, անցնում է դեդուկտիվ մոտեցման տրամաբանությունը: ՀՅԴ ծրագրերում, անխտիր, սկզբից բնորոշվում են ընդհանուր տեսությունները, ապա դրանցից բխում են գաղափարական հիմնավորումներ հայ իրականության կացությունը վերլուծելու համար: Տրամաբանական այս հնավանդ մոտեցմանն ակնարկում է Միքաել Վարանդյանը. «[ՀՅԴ անդրանիկ Ծրագրի] *թեորական մասը ծնունդ է ոչ անմիջապես հայ ժողովուրդի կացության, այլ համաշխարհային կյանքի եւ մտքի էվոլյուցիայի...»* (Վարանդյան Մ., Դաշնակցությունը եւ նրա հակառակորդները, Թիֆլիս, 1906, էջ 15):

ՀՅԴ Ընդհանուր տեսու-



Միքայել Վարանդյան

թյունները բխում են, գերազանցապես, համամարդկային արժեքներից, գաղափարներից ու բազմադարյան փորձնական ճանաչողությունից: Ընդհանուր տեսություններում այնուամենայնիվ առկա են նաեւ գաղափարներ, որոնք բխում են ազգային արժեքներից: Սակայն սրանք, դարձյալ, դեդուկտիվ եղանակներով են կիրառվում ՀՅԴ արժեհամակարգում, եւ ոչ թե մասնակի իրադրարձությունների ինդուկտիվ վերլուծմամբ:

Ահա, դեդուկտիվ մոտեցմամբ էլ կարելի է վերաբերվել, օրինակ, ազգերի ինքնորոշման իրավունքին: Նախ ցուցաբերենք մի ինդուկտիվ, մասնակիից՝ ընդհանուր մոտեցում. Թուրքիան եւ Իսպանիան չեն ճանաչում քրդերի ու բասկերի ինքնորոշման իրավունքը (համարենք՝ մասնակի դեպքեր), ուրեմն չկա ազգային ինքնորոշման իրավունք (համարենք՝ ընդհանրացում): Ապա՝ դեդուկտիվ մոտեցում. բոլոր ժողովուրդները ունեն ազգային ինքնորոշման իրավունք (համարենք՝ կանխավարկած), քրդերը եւ բասկերը որպես ժողովուրդ (համարենք՝ մասնակի դեպք) պետք է ունենան ազգային ինքնորոշման իրավունք (եզրակացություն): Կամ, մի այլ օրինակ՝ ՀՅԴ Ծրագրում ամրագրված է. *«յուրաքանչյուր ազգի գոյատեւման երաշխիքն անկախ եւ իրավական պետությունն է»* (համարենք կանխավարկած), բասկերն ազգային միավոր են (համարենք՝ մասնակի դեպք), հետեւաբար պետք է ունենան անկախ պետականություն (առաջին եզրակացություն) եւ իրավական պետություն (երկրորդ եզրակացություն):

Այսպես եւ բոլորը:



# Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար

Զ և Է հատորներ, Պէյրութ, 2010

Այլևս սեղանի վրա են Հայ Յեղափոխական Դաշնակցության արխիվային նյութերի հրատարակության ևս երկու հատորները՝ Զ և Է: Ընդամենը 2 տարի առաջ «Դրօշակը» տեղեկացրել էր «Նիւթերի» Ե հատորի հրատարակության մասին, որ այս մատենաշարի շարունակական կենսագրության մեջ նաև բաժանարար հանդիսացավ խմբագիրների առումով:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» շարքը, որի հրատարակմանը ՀՅԴ Բյուրոյի որոշումով ձեռնամուխ եղավ Դաշնակցության հայտնի տեսաբան Հրաչ Տասնապետյանը, մի տևական դադարից հետո շարունակություն ունեցավ Ե հատորով՝ հայտնի հայագետ Երվանդ Փամբուկյանի խմբագրությամբ:

Հրաչ Տասնապետյանը, որ զգալի ներդրում է ունեցել նաև Ե հատորի նյութերի հավաքման և համակարգ-






չային մուտքագրման աշխատանքներում, մեծ փափագ էր հայտնել հրատարակված տեսնել նաև Չորրորդ Ընդհանուր ժողովի նյութերի ծավալուն թղթածրարը: Մենք Ե հատորի լույս ընծայմամբ վկան դարձանք այդ իղձի իրականացման և հնարավորություն ունեցանք մեկ ամփոփ աշխատությամբ հասու լինել ժամանակի փաստագրական հարուստ նյութին, Քրիստափոր Միքայելյանի, Ռոստոմի, Սիմոն Զավարյանի, Նիկոլ Աղբալյանի, Ավետիք Իսահակյանի, Անդրանիկի, Սեպուհի, Նիկոլ Դումանի, Խանասորի Վարդանի, Սեբաստացի Մուրադի և դաշնակցական շատ այլ հայտնի գործիչների ու մարտիկների գրչին պատկանող նամակներին ու գրություններին:

«Նիւթերի» Զ հատորը, որ ընդգրկում է ՀՅԴ Չորրորդ Ընդհանուր ժողովին հաջորդած 1907-1909 թվականները, Դաշնակցության պատմության հարուստ նյութի արծարծման սահուն շարունակությունն է: Ընդհանուր ժողովին հաջորդած այդ տարիները թե հայ ժողովրդի և թե Հ.Յ. Դաշնակցության պատմության մեջ աչքի են ընկնում ամենաբարդ ու դեռ ուսումնասիրության կարոտ բազում իրողություններով, որոնք խորհրդահայ և նույնիսկ հետխորհրդային շրջանի մեր պատմագիրների կողմից հաճախ սխալ մեկնաբանությունների են արժանացել: Դա այն շրջանն է, երբ Դաշնակցությանը հաջողվեց ամրապնդել հայ ազատագրական շարժումը առաջնորդող կազմակերպության միասնականությունը և Հայ դատի համար պայքարի դրոշի շուրջ համախմբել հավասարապես կովկասահային, տաճկահային և ընդհանրապես բովանդակ հայությանը: Կուսակցությունից չեզոքացվեցին այլախոհ տարրերը, զտվեցին շարքերը և, վերամշակված Ծրագրին համապատասխան, կազմակերպվեցին կամ վերակազմակերպվեցին քաղաքական և մարտական խմբերը, արհեստակցական և գյուղացիական միությունները՝ նպաստելով կուսակցության ծավալմանը ժողովրդի լայն խավերի մեջ: Մարտահրավերներն առավել ծանր ու բազմազան էին արտաքին ճակատում: «Դաշնակցութիւն - Երիտասարդ թուրքեր յարաբերութիւններ,- գրում է Ե. Փամբուկյանը,- Օսմանեան սահմանադրութեան հռչակում, Պարսկաստանի յեղափոխական շարժում, Ընկերվար Միջազգայնականի անդամակցութիւն եւ այլն: Նշուած հարցերը առաջին հայեացքով կը թուին յատկանշել առաւելաբար Դաշնակցութեան գործունէության տարբեր երեսները միայն: Անոնցմէ շատեր, սակայն, յատկապէս Օսմ. սահմանադրութեան հռչակումը եւ հայ-եւթուրք յարաբերութիւններու նոր էջի մը բացումը՝ պատմակշիռ այնպիսի տարողութիւն կը կրէին, որ ճակատագրական նշանակութիւն պիտի ունենային ամբողջ հայ ժողովուրդին համար... Այս խնդիրներու հոլովոյթը պիտի երկարէր գէթ մինչեւ համաշխարհային Ա պատերազմը եւ հայ ժողովուրդին վրայ ի գործ դրուած Ցեղասպանութիւնը»:

Արդեն Զ հատորի առաջաբանում Երվանդ Փամբուկյանը գրում է, որ մատենաշարի հետագա հատորներում ըստ ժամանակագրական կարգի տեղ կգտնեն ՀՅԴ Դիվանատանը պահված այս և մյուս խնդիրներին վերաբերող արխիվային փաստաթղթերը: «Նիւթերի» Է հատորը, իբրև լրացում Զ գրքի և ընդգրկելով նույն ժամանակահատվածը, փաստորեն, այդ հարուստ նյութի միայն մի մասի մեկտեղումն է, որ ուսումնասիրության աննախադեպ շտեմարան է մերօրյա պատմաբանների համար:

Մատենաշարի վերջին զույգ հատորները նույնպես աչքի են ընկնում անհրաժեշտ ծանոթագրություններով, աղբյուրներին կատարված հղումներով, անգամ արևմտահայերենի և արևելահայերենի գրության տարբերությունների պատճառով ի հայտ եկող տարընթերցումների բացառման հեղինակային նախաձեռնությամբ, որ ավելի դյուրընթեռնելի է դարձնում պատմական արխիվային փաստաթղթերը:

Մատենաշարի հետագա հատորները ևս առաջիկայում հրատարակված տեսնելու ակնկալիքով՝ նշենք նաև, որ «Նիւթերի» վերջին Զ և Է գրքերը տպագրվել են «Փյունիկ» հիմնադրամի միջոցներով:

Էդիկ Անդրեասյան

# «Դրօշակ»- 2010


## Խմբագրական

| Խորագիր/վերնագիր | Հեղինակ | Թիւ | Էջ |
|---|---|---|---|
| Մեծ ուժ է հասարակական կարծիքը | | 1 | 2 |
| Ուղենիշերից պլատֆորմ՝ գաղափարակցական փորձագիտութեան ճանապարհով | | 2 | 2 |
| Քաղաքական զարնանամուտ | | 3 | 2 |
| Բարոյականութիւն եւ քաղաքականութիւն | | 4 | 2 |
| Յաղթանակների Մայիսը | | 5 | 2 |
| Նախընտրական մարտահրաւէրներ | | 6 | 2 |
| Փոխւում է բանակցային տրամաբանութիւնը | | 7 | 2 |
| Իշխանափոխութիւն՝ իշխանութիւնների նոր որակ ձեւաւորելու նպատակով | | 8 | 2 |
| Ժողովրդավարութիւնը Հայաստանում | | 9 | 2 |
| Ժողովրդավարութեան ՀՅԴ ընկալումը | | 10 | 2 |
| Բանակցային գործընթացի նոր տրամաբանության որոնումներ | | 11 | 2 |

## Տեսական

| Խորագիր/վերնագիր | Հեղինակ | Թիւ | Էջ |
|---|---|---|---|
| «Ազգ», «ազգություն», հասկացությունների միջնադարյան ըմբռնումները եւ հայ իրականությունը | Աշոտ Շահինյան | 6 | 23 |
| Ազգային հասկացություններ | Կարեն Խանլարյան | 7 | 9 |
| Համաշխարհային քաղաքակրթությունների եւ հայության դերի շուրջ | Արտակ Զարգարյան | 7 | 13 |
| Դեդուկտիվիզմը ՀՅԴ գաղափարախոսության մեջ | Կարեն Խանլարյան | 12 | 34 |

## Տեսակէտ

| Խորագիր/վերնագիր | Հեղինակ | Թիւ | Էջ |
|---|---|---|---|
| Հայրենիք-Սփիւռք. անկախութիւն եւ ինքնաճանաչում | Սիւզան Խարտալեան | 3 | 13 |
| Համարկում՝ տարանջատումով | Լեւոն Շիրինյան | 8 | 21 |
| Թուրք-հայկական յարաբերութիւնները փակուղու մէջ | Սելիմ Օզերթեմ | 9 | 21 |
| Հարցազրոյց Հասան Սելիմ Օզերթեմի հետ | | 10 | 35 |

## Խորհրդաժողով

| Խորագիր/վերնագիր | Հեղինակ | Թիւ | Էջ |
|---|---|---|---|
| Հայ-թուրքական հարաբերությունների ներկա գործընթացը եւ դրա ազդեցությունը ՀՀ ներքաղաքական զարգացումների վրա | Անդրանիկ Թեւանյան | 2 | 8 |
| Սոցիալական արդարության եւ համերաշխության հիմնահարցերը Հայաստանում | Արմեն Ռուստամյան | 4 | 4 |
| Սոցիալիստական մտքի զարգացումները | Կարեն Խանլարյան | 4 | 7 |
| Հայաստանը գլոբալացման հորձանուտում. լուծումնե՞ր, թե՞ խնդիրներ | Մհեր Ծատուրյան | 5 | 9 |
| Համերաշխությունը գլոբալիզացիայում եւ դրա արտապատկերումը եւ մարտահրավերները շվեդական մոդելի վրա | Պիտեր Վեյդերուդ | 5 | 16 |
| Դեմոկրատացման գործընթացի խոչընդոտները ու սահմանափակումները Հայաստանի հանրապետությունում | Արա Նռանյան | 12 | 19 |

## Պատմական, պատմաբանական

| Խորագիր/վերնագիր | Հեղինակ | Թիւ | Էջ |
|---|---|---|---|
| ՀՅԴ – ՌԿ(բ)Կ Ռիգայի 1921թ. բանակցությունների հարցի շուրջ | Արարատ Հակոբյան | 3 | 31 |

| | | | |
|---|---|---|---|
| Մի աղբյուր Վանա Իշխանի եւ Արամ Մանուկյանի մասին | Ա. Ս. Եղիազարյան | 3 | 38 |
| Խրիմյան Հայրիկի ջանքերը հայ-քրդական համագործակցություն գոյացնելու ուղղությամբ | Արմեն Կարապետյան | 4 | 20 |
| Ատելության անատոմիա. Ճշմարտություն Ստալինի մասին | Հայկ Մարտիրոսյան | 9 | 33 |
| Արարա. 1918 թ. վճռորոշ ճեղքումը | Լեւոն Շիրինյան | 10 | 14 |

## Հարցազրույց

| | | | |
|---|---|---|---|
| Ժամանակի գետը | Վահագն Գրիգորյան | 1 | 4 |
| Ի՞նչ շարունակություն կունենա գործընթացը | Կիրո Մանոյան | 2 | 4 |
| Հայ ժողովրդինն է այս հայրենիքը | Հրանուշ Հակոբյան | 3 | 4 |
| Օսկան Ալլերը «Դրօշակ»-ի խմբագրատանը | | 7 | 4 |
| Իշխանափոխություն՝ երկրի եւ ժողովրդի համար | Արմեն Ռուստամյան | 10 | 4 |
| Ընկերվար միջազգայնականի դիրքորոշումները հստակ են | Լեւոն Մկրտչյան | 11 | 4 |

## Սոցիալ-տնտեսական

| | | | |
|---|---|---|---|
| Պետության վախճանը (կամ ազատ շուկայի ութոփիան) | Արա Խանձեան, Խաչիկ Տէր Ղուկասեան | 2 | 15 |
| Հայաստանը մարդկային զարգացման համակարգում | Բենիամին Միրզոյան | 3 | 18 |
| Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում | Արթուր Ղուկասյան | 6 | 16 |
| Եվրոմիության տնտեսական ու պետական պարտքի ճգնաժամերն ու դրանց հաղթահարման քաղաքականությունները | Մհեր Ծատուրյան | 9 | 4 |
| Արդիականացում տնտեսական ոլորտում նշանակում է ազգային տնտեսության կառուցում | Արսեն Պետրոսյան | 12 | 25 |

## ԼՂՀ հիմնախնդիր

| | | | |
|---|---|---|---|
| Մադրիդյան սկզբունքները եւ ուժային ճանապարհով Ղարաբաղյան հարցի կարգավորման հնարավորությունը | Վահան Դիլանյան | 5 | 30 |
| Այն փոթորկալից օրը (Արցախ. 1988. փետր. 20) | Հ. Բ. Աբրահամյան | 8 | 11 |
| Այն փոթորկալից օրը (շարունակություն) | Հ. Բ. Աբրահամյան | 9 | 10 |

## Անդրադարձ

| | | | |
|---|---|---|---|
| Վասն տգիտության | Հայկազուն Ալվրցյան | 2 | 28 |

## Խմբագրի անկյուն

| | | | |
|---|---|---|---|
| Խալիլ բեյի կոշիկները | Ռուբեն Հովսեփյան | 2 | 43 |
| Ալիեւյան ժառանգական բլեֆը | Ռուբեն Հովսեփյան | 7 | 41 |
| Գավառական ձեռնածուն | Ռուբեն Հովսեփյան | 11 | 43 |

## Հիշատակ

| | | | |
|---|---|---|---|
| Խօսք Սարգիս Զէյթլեանի յիշատակին | | 3 | 44 |

## Հայ դատ, Հայկական հարց

| | | | |
|---|---|---|---|
| Եվրոպական համակարգը եւ Հայկական հարցը | Լեւոն Շիրինյան | 1 | 16 |
| Հայոց Ցեղասպանության փաստի ճանաչման միջազգային իրավական հիմքերը | Արարատ Հակոբյան | 5 | 25 |
| Հայկական հարցը եւ տարածաշրջանի նաւթի պաշարները | Ժիլբէրտ Մուշկանբարեան | 8 | 17 |
| Սեւաֆոբիայի դրսեւորումները Թուրքիայի հասարակական-գիտական քննարկումներում | Լեւոն Հովսեփյան | 9 | 15 |
| ՀՅԴ քաղաքական հիմնանպատակի՝ Արեւմտյան Հայաստանի ազատագրության խնդրի միջազգային-իրավական լեգիտիմությունը | Գեւորգ Խուդինյան | 12 | 12 |

## Միջազգային

| | | | |
|---|---|---|---|
| Լարվածությունը թուրք-իսրայելյան հարաբերություններում եւ Հայոց ցեղասպանության խնդիրը | Ա. Ս. Եղիազարյան, Գ. Մ. Արշակյան | 4 | 23 |

## ՀՀ Ազգային ժողով

| | | | |
|---|---|---|---|
| Բաժնետիրական կառավարման համակարգի զարգացման մի քանի առաջարկների մասին | Արծվիկ Մինասյան | 1 | 9 |
| Միջազգային պայմանագրերը վերապահումով վավերացնելու Հայաստանի օրենսդրության զարգացման մասին | Արծվիկ Մինասյան | 2 | 24 |
| Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին ՀՅԴ օրինագիծ | Ռուզան Առաքելյան | 3 | 28 |
| Վտանգված է ազգային լեզվի եւ ազգային դպրոցի հեռանկարը | Լիլիթ Գալստյան | 6 | 30 |

## ՀՀ բանակ

| | | | |
|---|---|---|---|
| Զինվորականության բարոյա-հոգեւոր որոշ հիմնախնդիրների շուրջ. դիտարկում հայ իրականությունից | Կարեն Վերանյան | 8 | 29 |
| Ավիացիան Արցախյան գոյամարտում | Արծրուն Հովհաննիսյան | 11 | 32 |

## Մշակույթ

| | | | |
|---|---|---|---|
| Պարապ գրույց | Ֆելիքս Մելոյան | 8 | 35 |

## Առաջարկ

| | | | |
|---|---|---|---|
| Համահայկական համարկման մասին | Մկրտիչ Մկրտչեան | 10 | 12 |

## Ճանաչում

| | | | |
|---|---|---|---|
| Քաղաքակրթությունն ընդդեմ ցեղասպանության | Արծրուն Խանջյան | 10 | 30 |

## Վարկած

| | | | |
|---|---|---|---|
| Մի բացառիկ լուսանկարի հետքերով | Կ. Բասենցի | 10 | 34 |

## ՀՅԴ-120

| | | | |
|---|---|---|---|
| Հայ Յեղափոխական Դաշնակցության վճռորոշ դերը Հայ ազատամարտի կազմակերպման եւ ղեկավարման ու հայոց անկախ պետականության ստեղծման գործում | Ար. Ս. Եղիազարյան | 8 | 4 |
| ՀՅԴ պետական գործունեությունը 1918-1920 թթ. | Արարատ Հակոբյան | 11 | 8 |
| Կամք, վճռականություն և արթուն միտք | Հրանտ Մարգարյան | 12 | 2 |

## Նյութեր թուրք պատմաբանների համար

| | | | |
|---|---|---|---|
| Տրապիզոնի հայերի տեղահանության եւ կոտորածների դատավարությունը (մեղադրական եզրակացությունը) | Մելինե Անումյան | 4 | 13 |

## Տարածաշրջան

| | | | |
|---|---|---|---|
| Ջավախքի վրացականացման նոր ռազմավարություն կամ ՀԿ-ների դեմ մշակութային մեկուսացում | Վահե Սարգսյան | 5 | 37 |
| Փանթուրքիզմի եւ փանթուրանիզմի թունը ժառանգորդ՝ Ազգային շարժում կուսակցությունը | Աւօ Գապրճեան | 7 | 18 |
| Ադրբեջան. Խոցելի կայունություն (Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցը) | Կարեն Վերանյան | 9 | 28 |
| Նոր տեղաշարժեր Միացյալ Նահանգներում Վրաստանի հակառուսական լոբբիստական գործունեության մեջ | Կարեն Վերանյան | 10 | 20 |

| | | | |
|---|---|---|---|
| Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը որպես տարածաշրջանային ռազմաքաղաքական իր դերակատարության բարձրացման կարեւոր բաղադրիչ | Լեւոն Հովսեփյան | 10 | 24 |
| Ադրբեջանի «հզոր» տնտեսության կառուցվածքային եւ բովանդակային հիմնախնդիրները | Սարգիս Մանուկյան | 11 | 14 |


## Նվիրյալներ


| | | | |
|---|---|---|---|
| Աստուծոյ ընտրեալ ազատարարն ու զոհը | Աշոտ Պետրոսեան | 1 | 24 |
| Մեծն Շահէն | Աշոտ Պետրոսեան | 4 | 38 |
| Մի էջ Արցախյան Ազատամարտի | Համլետ Գեւորգյան | 10 | 39 |


## Տեղեկանք


| | | | |
|---|---|---|---|
| Կնոջ դերը Իսրայելի պաշտպանության բանակում | Կարեն Վերանյան | 1 | 33 |
| Թուրքական գործոնը հետխորհրդային որոշ հակամարտություններում | Կարեն Վերանյան | 4 | 30 |
| Թուրք-ադրբեջանական հակահայ լոբբինգը Միացյալ Նահանգներում | Կարեն Վերանյան | 6 | 32 |
| ԱՄՆ-ի Կոնգրեսի «Սովորական սպառազինությունների մատակարարումները զարգացող աշխարհի երկրներին 2001-2008թթ.» զեկույցը | Կարեն Վերանյան | 7 | 27 |
| Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ | Լեւոն Հովսեփյան | 11 | 27 |


## Հաղթանակ-92


| | | | |
|---|---|---|---|
| Հայաստանի վերածննդի ճանապարհին | Լեւոն Ղ. Շիրինյան | 5 | 4 |


## Հաղթանակ-65


| | | | |
|---|---|---|---|
| Հայերը «Խորհրդային Միության Հայրենական Մեծ պատերազմը 1941-1945թթ.» հանրագիտարանում | Հրանտ Ղազարյան | 5 | 42 |


## Ընկերվար միջազգայնական


| | | | |
|---|---|---|---|
| Պետք է մերձեցնել մարդկանց դիրքորոշումները | Լուիս Այալա | 6 | 4 |
| Մենք միասին շատ անելիք ունենք | Հրանտ Մարգարյան | 6 | 6 |
| Սոցիալիստների սպասումները ՀՅԴ-ից մեծ են | Մարիո Նալբանդյան | 6 | 8 |
| Հայաստանյան զարգացումները, այնուամենայնիվ, տարբեր են | Արմեն Ռուստամյան | 6 | 10 |
| Մենք հպարտ ենք Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված ՀՅԴ ջանքերով եւ բերած ավանդով | Լուիս Այալա | 6 | 13 |
| Ճշմարտությունը մեր երկխոսության մեջ է | Սալահին Ալլահվերդիեւ | 6 | 14 |


## Ռեպորտաժ


| | | | |
|---|---|---|---|
| «Արամ Մանուկյան» կենտրոնը բացեց իր դռները | Էդիկ Անդրեասյան | 6 | 38 |


## Նամակ խմբագրությանը


| | | | |
|---|---|---|---|
| Սթափվենք եւ նախապատրաստվենք 2015 թվականը մոտենում է | Համլետ Դավթյան | 4 | 16 |


## Պահոց


| | | | |
|---|---|---|---|
| Րաֆֆիի կնոջ եւ որդիների մասին | Վարդան Ռ. Գրիգորյան | 6 | 43 |

## Մասունքներ


| | | | |
|---|---|---|---|
| Մի առասպելի անմեռ վկան | Արտաշէս Շահբազյան | 7 | 36 |


## «Դրօշակ»-ը 100 տարի առաջ


| | | | |
|---|---|---|---|
| Դրօշակ - 1, 1910 թ. | | 1 | 39 |
| Ռուսիա. Պետական հարուածը | | 2 | 45 |
| Պառլամենտական ընտրութիւնները Ֆրանսիայում | | 3 | 45 |
| Մի մեծ շարժման ստուերները | | 4 | 44 |
| Կռիւներ Պարսկաստանում | | 5 | 50 |
| Մարտիրոս Զարուխչեան | | 6 | 46 |
| Լեհ սոցիալիստները «Դաշնակցութեան» մասին | | 7 | 44 |
| Ցինիզմի ծայրակէտը | | 8 | 44 |
| Յայտարարութիւն | | 9 | 44 |
| Միջկուսակցային խորհրդաժողով | | 10 | 45 |
| Միջկուսակցային խորհրդաժողով | | 11 | 45 |


## Նոր գրքեր


| | | | |
|---|---|---|---|
| «Որ ապրի հիշողությունը» | Էդիկ Անդրեասյան | 1 | 41 |
| «Անկախ պետականության եւ քաղաքական հայագիտության ակունքներում» | Էդիկ Անդրեասյան | 2 | 46 |
| «1946-1948 թթ. հայրենադարձությունը եւ նրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» | Էդիկ Անդրեասյան | 3 | 46 |
| «Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրա» | Էդիկ Անդրեասյան | 4 | 46 |
| «Դռան թակոցը» | Էդիկ Անդրեասյան | 5 | 51 |
| «Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը եւ հետեւանքները » | Էդիկ Անդրեասյան | 6 | 47 |
| «Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը» | «Դրօշակ» | 7 | 46 |
| Մուշեղ Միքայելյան. «Ազատամարտ» | Ռուբեն Հովսեփյան, Էդիկ Անդրեասյան | 8 | 45 |
| «Հայաստանը 1945-46 թթ. դիվանագիտական փաստաթղթերում» | | 9 | 45 |
| «Տէր Զօր՝ Մարտիրոսաց քաղաք» | Շահան Եպս. Սարգիսեան | 10 | 46 |
| «Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ, տեղական իրողություններ» | | 11 | 47 |
| Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար | Էդիկ Անդրեասյան | 12 | 41 |


## Պատկերասրահ


| | | | |
|---|---|---|---|
| Էդվարդ Խանոյան | | 1 | 48 |
| Թաքոս (Հրանտ Թաղևոսյան) | | 2 | 48 |
| Ռաֆայել Մելիքյան | | 3 | 48 |
| Մկրտիչ Սեդրակյան | | 4 | 48 |
| Ռուբեն Կարապետյան | | 5 | 52 |
| Գրիգորյան Արմինե | | 6 | 48 |
| Հարություն Կալենց | | 7 | 48 |
| Սարո Կալենց | | 8 | 48 |
| Փարավոն Միրզոյան | | 9 | 48 |
| Կարեն Կարապետյան | | 10 | 48 |
| Պատկերազարդ ընծա՝ ՀՅԴ-120- ամյակի առիթով | Անուշ Ամսեյան | 11 | 48 |
| Էդիկ Վարդանյան | | 12 | 48 |





Ծնվել է **1946թ.** ապրիլի 15-ին Թալինում:

**1976թ.** ավարտել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը:

**1977թ.-ից** մասնակցում է հանրապետական, համամիութենական և միջազգային ցուցահանդեսների:

**1980թ.-ից** դասավանդում է Երևանի Գեղարվեստի պետական ինստիտուտում:

**1982թ.-ից** Հայաստանի նկարիչների միության անդամ:

**1995-2008թթ.** Երևանի Գեղարվեստի պետական ինստիտուտի կերպարվեստի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր:

Նրա նկարները ցուցադրվում են Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի պետական թանգարաններում և մասնավոր հավաքածուներում (Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Ֆինլանդիա, Սիրիա և այլն):
Անհատական ցուցահանդեսներ է ունեցել.
**1999թ.** Երևանում
**2003թ.** Երևանում
**2006թ.** Երևանում



**2006թ.-ից** Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ է:

# ԴՐՕՇԱԿ

Պատկերասրահ



Հ. Մաթևոսյանի դիմանկարը



Մ. Գալշոյանի դիմանկարը



Խ. Դաշտենցի դիմանկարը



Օգոստոս



Հիշողության դաշտ


2010թ. դեկտեմբերի 9
Հայաստան


ՆԻՒԹԵՐ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Է. ՀԱՏՈՐ
Պէյրութ – 2010



# ԴՐՕՇԱԿ





